

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Բոլորս Արցախի Համար

Արցախեան Հերոսամարտը թե-  
 ևակոխեց իր երկրորդ շաբաթը, որու  
 ընթացքին Ատրպեյճան եւ Թուրքիա,  
 իրենց հետ ունենալով աշխարհի  
 տարբեր կողմերէն եկած վարձկան-  
 ները ու ռազմադաշտ նետելով իրենց  
 ամբողջ զինամոցը կը շարունակեն  
 պարտութիւններ կրել անձնուրաց  
 Հայ զինուորներու սխրագործու-  
 թեանց առջեւ:

Թշնամիի նախանշած բոլոր  
 ծրագիրները ձախողութեան մատն-  
 ուած են: Երեք օրէն Ստեփանակերտ  
 հասնելու երազանքները կը մնան այդ-  
 պիսին ու ժամանակը կը գործէ ի  
 նպաստ Հայութեան:

Տասնեակ հազար Հայ կամա-  
 ւորներ անհամբեր կը սպասեն իրենց  
 հերթին, ուղղուելու ռազմաճակատ,  
 սահմաններուն կանգնած մեր առի  
 զինուորներուն միանալու ու պաշտ-  
 պանելու հայոց սրբազան հողը: Այս  
 օրերուն կը գրուին Հայոց պատմու-  
 թեան հերոսական նորագոյն էջերը:

Հայաստանի, Արցախի ու  
 սփիւռքի տարածքին Հայութիւնը  
 մէկ մարդու մտքով կը ցուցաբերէ սար-  
 տարանպատեան կոբի: Իւրաքանչիւ-  
 րը իր ներդրումը ոգի բերէ անխուսա-  
 փելի եւ մօտալուտ յաղթանակին:

Այս օրերուն մեծ թափով կը շա-  
 րունակուի Հայաստան Համահայ-  
 կական Հիմնադրամի «Բոլորս Արցա-  
 քի Համար» հանգանակային արշա-  
 ւը: Երեքշաբթի երեկոյեան, թերթը մա-  
 մուլին ուղարկելու պահուն հաւաք-  
 ուած էր 71 միլիոն տոլար: Այս գու-  
 մարը Հիմնադրամի պատմութեան մէջ  
 մրցանիշ է, սակայն անբաւարար:  
 Հայրենիքը կը սղէ կենաց ու մահ-  
 ուան կռիւ եւ կարիքը ունի շատ աւել-  
 ի մեծ օժանդակութեան: Որոշ տու-  
 եալներու համաձայն Հայաստան ու  
 Արցախ կը կրեն օրական 30 միլիոն  
 տոլարի վնաս, չհաշուած պատերազ-  
 մի հետեւանքով ապագային յառա-  
 քանալիք տնտեսական ու ընկերա-  
 յին նոր մարտահրաւերները:

Հետեւաբար, Սփիւռքահայու-  
 թիւնը եւ յատկապէս Ամերիկահայու-  
 թիւնը հրամայականի առջեւ է կրկնա-  
 պատկելու ու եռապատկելու հան-  
 գանակուած գումարները: Մէկ ան-  
 գամ նուիրատուութիւնը կատարե-  
 լով չենք կրնար բաւարարուիլ: Իւ-  
 րաքանչիւր անհատ, որու երակնե-  
 թէն կը հոսի հայու արիւն պիտի գի-  
 տակցի, որ ինք զինուոր է այս հերո-  
 սամարտին մէջ: Սահմանին կանգ-  
 նած Հայ զինուորը կը նահատակ-  
 ուի, որպէսզի մենք ճակատաբաց  
 ապրինք այս երկրագունդին վրայ:

Հնչակեան Կուսակցութիւնը  
 ինչպէս միշտ, այսօր եւս կանգնած  
 է Հայրենիքի ու Հայ զինուորի կող-  
 քին ու կոչ կ'ուղղէ իր անդամնե-  
 րուն, համակիրներուն ու համայն  
 Ամերիկահայութեան մասնակցելու  
 դերանահաւաքին ու իր ներդրումը  
 բերելու Հայրենիքի պաշտպանու-  
 թեան սրբազան գործին:

ԲՈԼՈՐՍ ԱՐՑԱՅԻ ՀԱՍԱՐ

## Հայկական Բանակը Բոլոր Գակատներու Վրայ Կը Շարունակէ Պարտութեան Մատնել Թշնամի Զօրքերը «Եթէ Միջազգային Հանրութիւնը ճշգրիտ Զգնահատի Իրավիճակը, Եւրոպան Պետք է Թուրքիային Սպասի Վիեննայի Մերձակայքուն»։ Վարչապետ Փաշինեան

**Արցախի Պաշտպանութեան  
 Բանակը կը շարունակէ յաջո-  
 ղութեամբ կասեցնել թշնամիի բո-  
 լոր յարձակումները՝ տարբեր ռազ-  
 մաճակատներու վրայ՝ պատճառե-  
 լով անոնց մարտակալին եւ զինամ-  
 թերքի մեծ կորուստներ:**

**Շատ մը վայրերու մէջ Հայ-  
 կական Բանակը կը հասնի որոշակի  
 յաջողութիւններու:**

**Ատրպեյճանի ր անյաջողու-  
 թիւններէն զայրացած, կը դիմէ  
 աւելի ծանր զինատեսակներու՝ թի-  
 րախաւորելով Ստեփանակերտի,  
 Շուշիի եւ այլ քաղաքներու խա-  
 դող բնակչութիւնը:**

**Այս շաբաթ, Արցախի նախա-  
 գահ Արայիկ Յարութիւնեան մեկ-  
 նեցաւ ռազմաճակատ՝ հայ զինուո-  
 րի կողքին ըլլալու համար, հոնկէ  
 տեղեկութիւններ հաղորդելով տի-  
 րող իրավիճակի մասին:**

**Հոկտեմբեր 6-ին, հաղորդուե-  
 ցաւ որ, վարչապետ Փաշինեան  
 այցելած է Արցախ, ուր խորհրդակ-  
 ցութիւններ ունեցած է Հանրապե-  
 տութեան ղեկավարութեան հետ:**

**Դիւանագիտական ճակատի  
 վրայ Հայաստանի ղեկավարութիւնը  
 կը շարունակեն իրենց շփումները  
 բազմաթիւ երկիրներու եւ միջազ-  
 գային կառույցներու ղեկավարնե-  
 րուն հետ:**

**Միւս կողմէ նախագահ Արմէն  
 Սարգսեան եւ վարչապետ Փաշին-  
 եան հարցազրոյցներով հանդէս կու**



Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութիւնեան՝  
 ռազմաճակատի վրայ Հայ զինուորներուն հետ

զան միջազգային հեղինակաւոր  
 լրատուամիջոցներով, օտար հան-  
 րութիւնը զգուշացնելով Ատրպեյ-  
 ճանա-թրքական արշաւանքի հե-  
 ուաւոր նպատակներու մասին:

**Գերմանական «Պիլտ» թեր-  
 թին տրուած հարցազրոյցի ըն-  
 թացքին Փաշինեան յայտնեց, որ  
 եթէ միջազգային հանրութիւնը  
 ճշգրիտ չզննահատէ իրավիճակը,  
 ուրեմն Եւրոպան պէտք է թուրք-  
 իային սպասէ վիեննայի մերձա-  
 կայքը:**

«Ես կարծում եմ, որ մեր

տարածաշրջանում տեղի ունեցող  
 իրադարձութիւնները բաւարար չա-  
 փով ուշադրութեան արժանանում  
 են միջազգային հանրութեան կող-  
 մից: Գուցէ նաեւ այն պատճառով,  
 որ դարաբաղեան հակամարտու-  
 թեան գոտում են յայտնուել վարձ-  
 կաններ եւ ահաբեկիչներ Սիրիա-  
 յից», - ըսաւ Հայաստանի վարչա-  
 պետը:

ԱՄՆ նախագահ Տոնալտ  
 Թրամփի վարչակազմի ներկայա-

Շար.ը էջ 5

## Լուս Աճճելուի Հայութիւնը Զօրաշարժի Մէջ



Հայ ցուցարարները հաւաքուած CNN-ի շէնքին առջեւ

**Արցախի դէմ շղթայագերծ-  
 ուած Ատրպեյճանա-թրքական յար-  
 ձակումին ու պատերազմական գոր-  
 ծողութիւններու առաջին վայրկ-  
 եաններէն սկսեալ Լոս Անճելըսի  
 Հայութիւնը ենթարկուեցաւ զօրա-  
 շարժի:**

**Հայաստան Համահայկական  
 Հիմնադրամի միջոցաւ հանգանա-  
 կութեան լայն ձեւով մասնակցելու**

կողքին, շրջանի հայկական կազ-  
 մակերպութիւններու եւ անհատա-  
 կան նախաձեռնութիւններու մի-  
 ջոցաւ աշխատանքներ կը տար-  
 ուին Ամերիկեան քաղաքական  
 շրջանակները եւ լրատուամիջոց-  
 ները իրագեկելու եւ անոնցմէ պա-  
 հանջելու համար՝ որպէսզի դիրքո-

Շար.ը էջ 5

## Հ.Բ.Ը.Ս. Մէկ Միլիոն Տոլար Կը Նուիրէ Եւ Կը Յայտարարէ Կրկնապատկումի Ծրագիր

**Ի պատասխան Արցախի մէջ  
 յարաճող մարդասիրական կարիք-  
 ներուն, Հ.Բ.Ը.Ս.-ի Կեդրոնական  
 վարչական ժողովը, համազօրձակ-  
 ցութեամբ «Հայաստան» Համա-  
 հայկական Հիմնադրամի, կը յայ-  
 տարարէ #ՕգնութիւնԱրցախին  
 կրկնապատկող Հանգանակութեան  
 ծրագրի մեկնարկը:**

**Ծրագիրը նուիրատուութիւն-  
 ներու համար բաց է մինչեւ 15  
 Նոյեմբեր, 2020:**

**Այս ծրագրով հանգանակուած  
 եւ կրկնապատկուած գումարները  
 պիտի յատկացուին Արցախի եւ  
 Հայաստանի մէջ բացառապէս մար-  
 դասիրական օժանդակութեան եւ  
 հրատապ օգնութեան թշուառ  
 սարքերու ձեռքբերման, դիմազ-  
 րաւելու այն լայնածաւալ պատե-  
 րագմը, որ սանձազերծուեցաւ Սեպ-  
 տեմբեր 27, 2020-ի թշնամական**

Շար.ը էջ 19

**ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ**

**Ղարաբաղեան Պատերազմի Ալիքները Կը Հասնեն Բոլոր Մայրաքաղաքներին**

**ՆԱԻՐԱ ՀԱՅՐՈՒՄՅԵԱՆ**

Ղարաբաղում թէժ մարտական գործողութիւններին զուգահեռ Երեւանն ու Ստեփանակերտը ինտենսիւ դիւանագիտական աշխատանք են տանում՝ բոլոր երկրներին պատասխանատուութեան մասին պարզ հարցեր տալով: Դժուար թէ որեւէ մէկը կարողանայ շրջանցել այդ հարցերը, եւ իւրաքանչիւրը ստիպուած է լինելու ընդունել պատասխանատուութիւն:

Երեւանը հետ է կանչել Իսրայէլում Հայաստանի դեսպանին խորհրդակցութեան համար եւ դնում է Ատրպէյճանին Իսրայէլի կողմից սպառնալուծութեան մատակարարման հարցը: Հոլոքոսթը վերապրած ժողովրդի կառավարութիւնն աջակցում է Ատրպէյճանին ու Թուրքիային, որոնք մտադրուել են աւարտին հասցնել հայ ժողովրդի ցեղասպանութիւնը:

ՆԱՏՕ-ում Թուրքիայի դաշնակիցները պէտք է բացատրեն, թէ ինչու են F-16 ինքնաթիռները կրակում Լեւոնային Ղարաբաղի քաղաքների եւ գիւղերի վրայ՝ սպանելով խաղաղ բնակիչների: Այս մասին կանադային դիմելիս յայտարարել է վարչապետ Նիկոլ Փաշինեանը կանադական The Globe and Mail-ին տուած հարցազրույցում:

Բարդ հարցերի պէտք է պատասխանեն նաեւ Վրաստանն ու Ուկրաինան, եւ այս իրավիճակում չհզոգութիւնը չի աշխատում: Թբիլիսին եւ Կիւեւն ասում են, որ չեն աջակցելու զարաբաղեան կոնֆլիկտի այս կամ այն կողմին: Սակայն սա նշանակում է, որ նրանք հաւասարութեան նշան են դնում հայերի ինքնիշխանութեան պաշտպանութեան եւ Ատրպէյճանի եւ Թուրքիայի ահաբեկչական յարձակումները «հավասարութիւն» արդէն արտացոլում է վրաստանի ներքին իրավիճակի վրայ, որտեղ խոշոր հայ եւ Թուրք համայնքներ կան:

Ամերիկեան եւ եւրոպական խորհրդարանականները կոչ են անում պատժամիջոցներ կիրառել Թուրքիայի եւ Ատրպէյճանի դէմ, բայց ԱՄՆ պետքարտուղարը դեռեւս «յոյս ունի», որ Թուրքիայի կողմից Ատրպէյճան սիրիացի վարձկանների տեղափոխումը չի համապատասխանում իրականութեանը: Իսկապէս Չայլամի կեցուածք՝ էրդողանին «չվիրաւորելու» համար:

Թուրքիայի միջամտութիւնը արցախեան հակամարտութիւնը բարձրացրել է քաղաքակրթական ընտրութեան մակարդակի, որտեղ իւրաքանչիւր կողմ, իւրաքանչիւր ազգ եւ իւրաքանչիւր մարդ իր համար ընտրութիւն է կատարում, թէ որ կողմում է: Բոլորը հասկանում են, որ իւրաքանչիւրը պէտք է բախուի դրան, եւ զարաբաղեան պատերազմի ալիքները կը հասնեն բոլոր մայրաքաղաքներին:

Տաւուշում չուլիսեան իրադարձութիւններից յետոյ Ռուսաստանում սկսուեց «ծիրանային պատերազմ», եւ այդ երկրում ազգամիջեան բախումները հնարաւոր եղաւ կանգնեցնել միայն մեծ ջանքերի շնորհիւ:

Կեղծ հաւասար հեռաւորութիւն պահելու ժամանակն աւարտուել է. Հայաստանը ուղիղ դնում է հարցը՝ ահաբեկչութեան այս եւ այն կողմում: Այսուհետ, դա բարոյական հարց է, այլ բոլոր երկրների անվտանգութեան հարցն է: «ԼՐԱԳԻՐ»

**Թուրքիայի Քայքայիչ Մարտահրաւերը ՆԱՏՕ-ին**

**ԱՐԱՍ ԱՍՏՈՒՆԻ**

ՆԱՏՕ-ի գլխաւոր քարտուղար Յանս Ստոլտենբերգը կոչ է անում անյապաղ դադարեցնել կրակն Արցախում եւ սկսել բանակցութիւն: Ստոլտենբերգի կոչն անշուշտ շատ կարեւոր է, սակայն կայ մի բաւականին հակառակ համայնք: Բանն այն է, որ արցախեան ռազմաճակատում կրակը վարում է փաստացի նաեւ ՆԱՏՕ-ն, առնուազն այնքան ժամանակ, քանի դեռ ատրպէյճանա-գրոհային ուժը ղեկավարում է Թուրքական հրամանատարութեամբ, քանի դեռ Թուրքիան էլ ՆԱՏՕ-ի անդամ է: Թուրքական զինուժը՝ ռազմական օդանաւերը, հրահանգիչները, զինուորները գտնուում են Ատրպէյճանում եւ վարում են մարտական եւ ահաբեկչական գործողութիւններ Արցախի դէմ, ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան ահաբեկիչներ է տեղակայել Ատրպէյճանում, որոնք մասնակցում են Հայաստանի ու Արցախի դէմ գրոհին: Այլ կերպ ասած՝ Արցախի դէմ կրակի հովանաւորը ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան է, ըստ այդմ՝ Հիւսիսատլանտեան դաշինքը, անելով իսկապէս շատ կարեւոր կոչ կրակի դադարեցման առումով, միաժամանակ թերեւս պէտք է նաեւ գործուն քայլեր ձեռնարկի հէնց իր անդամին զսպելու եւ նրան ռազմական գործողութիւնների հովանաւորի եւ հրամանատարի դիրքից հեռացնելու համար: Թող չլինի որեւէ կասկած, որ այդ խնդիրը լուծելուց յետոյ կրակն իսկապէս կը դադարի, քանի որ Ատրպէյճանն առանց Թուրքիայի պարզապէս ոչինչ է եւ ի վիճակի չէ ռազմական գործողութիւններ վարել արցախեան Պաշտպանական բանակի դէմ:

Բանն այն է, որ այստեղ թէ միջազգային անվտանգութեան ու կայունութեան հարցն է, թէ՛ այդ գործում առանցքային քաղաքակրթական դեր ունեցող Հիւսիսատլանտեան դաշինքի միջազգային հեղինակութեան: Ի վերջոյ, ՆԱՏՕ-ն իր բարձր դիրքը նուաճել է ոչ միայն զուտ ռազմական ներուժի բերումով, այլեւ տնտեսաքաղաքական, քաղաքակրթական առաջատարութեան: Դաշինքը առանձ-

է: Սակայն յատուկ նպատակը՝ Նեթանյահույի կառավարութեան, Իսրայէլում ռուսալեզուների անուսնից խօսող քաղաքական կուսակցութիւնների, դրանց շարկապուած արդիւնաբերական միւլտիմեդիա շահերից բխող ընդօրոշակ հակահայ քաղաքականութեան արդարացումն է:

Իսրայէլական գէնքը պէտք է մատակարարուի առանց խոչընդոտների եւ սպանի հայերին ռուսական հանրութեան առնուազն չէզոք, ցանկալի է նաեւ՝ իսրայիլական տրամադրութիւնների ներքոյ: Բանը հասել է նրան, որ պետական միջոցները ստիպուած են կոռեկցիայի ենթարկել հրեայ «ազատ» լրագրող-ակտիվիստների Նեթանյահուի հետ համաձայնեցումը սեզոնային անյապուղ հակահայութիւնը:

Շատ հրեաներ, արուեստի եւ հասարակական գործիչներ, բլոգերներ չեն բաժանում Նեթանյահույի հայեացքները եւ արտահայտում են իրենց անհամաձայնութիւնը:

**Իսրայէլը՝ Արցախում Բարբարոսութեան Մեղսակից. Պատերազմի Իրական Հրձիգը**

**ՊԱԻԵԼ ՂԱԼԼԱՔԵԱՆ**

Համաձայն վարչապետ Փաշինեանի, Հայաստանը բախուել է միջազգային ահաբեկչութեան ճակատին, ստանձնելով քաղաքակրթական նոր առաքելութեան բեռը: Այս յայտարարութիւնն ունի իր շարունակութիւնը՝ ցաւօք, աշխարհագրական-քաղաքական զգալիօրէն աւելի լայն ընդգրկումով:

Բիբի Նեթանյահուի Լիբուզ կուսակցութեան շուրջ կազմուած կոալիցիոն կառավարութիւններն առնուազն 2015-ից ի վեր գտնուում են ահաբեկչութիւնը իրախոսողների շարքում: Խօսքը 2016-ի եւ 2020-ի պատերազմների նախապատրաստութեան նպատակով Բաքուին գէնքի մատակարարումների մասին է: Մօտաւոր ծաւալը 2.6 միլիարդ ԱՄՆ դոլար է:

Այն արդարացումները, թէ «դուք [հայերը] էլ մեզանից գէնք գնեիք», յանգում են Բաքուի եւ Երեւանի ֆինանսական անհամեմատելի կարողութիւններին եւ բարոյագուրդ են իրենց հիմքում:

Դա նոյնն է, ինչ հրեաների զանգուածային սպանող կազմակերպած նացիստների ոճրագործութիւնը, որ անգլերէն հնչեղ «հոլոքոստ» բառով են կոչում, բացատրել մարդկային անշունչ

բիոզանգուածի պաշարների՝ Գերմանիայի պարզ կարիքով: Իսրայէլն էլ փողի կարիք ունի եւ այդ պատճառով հայ է սպանում:

Այս պարբերութիւնն այն է, ինչին արժանի է Նեթանյահուի կառավարութիւնը եւ նրան իշխանութեան բերող էլեկտորատը: Իսկ դա, ցաւօք, միլիոնաւոր հրեաներ են՝ հայ գոհերի պարագային իսրայէլում օգտագործող «համաշխարհային պատերազմով պայմանաւորուած ցաւալի դէպքերը վերապրածների շառաւիղները»:

Մէկ այլ՝ մասնաւոր ընկերութիւնների գործարքներին պետութեան չմիջամտելու փաստարկը վիրաւորական է բազում սրամիտ անեկղոտների հեղինակ ժողովրդի համար:

Հրեաները, արդէն ոչ միլիոնաւոր, այլ մի քանի տասնեակ կամ հարիւրեակ, որոնք Ռուսաստանում գտնուում են Իսրայէլ պետութեան գրեթէ անթաքույց խնամքի ներքոյ, ռուսական Ձլմ-ներով, յատկապէս էխոյ Մոսկուի, Դոժդ եւ նման, հակահայ քարոզչութիւն են ծաւալում հէնց Բաքուի 2016-ի եւ 2020-ի պատերազմների նախօրէններին եւ դրանց ընթացքում:

Տպաւորութիւն է ստեղծուում, որ ընդհանուր նպատակը հայերի հանդէպ ռուս մեծամասնութեան ատելութեան գրգռումն

նայատուկ է եղել այն իմաստով, որ լինելով ռազմական դաշնակցային բլոկ՝ այն այդուհանդերձ արտացոլել է արդիական, զարգացող պետութիւնների միութիւն՝ ցոյց տալով նաեւ աշխարհին, որ անվտանգութիւնը զարգացման, արդիականացման օրակարգում է: Ըստ այդմ, Թուրքիան իր ահաբեկչական գործիքակազմով ներկայումս մարտահրաւեր է նետել ոչ միայն միջազգային անվտանգութեանը, ռեզիոնալ կայունութեանը, Հայաստանին, Արցախին, այլեւ պետութիւնների, թերեւս մարդկութեանը:

Թուրքիան մարտահրաւեր է նետել նաեւ ՆԱՏՕ-ին, դաշինքի հեղինակութեանը, դաշինքի քաղաքակրթական վարկին: Այդ մարտահրաւերի սպառնալից բնույթը գուցէ անմիջականօրէն զգալի չէ կարճ ժամանակահատուածի համար, բայց երկարաժամկետ հեռանկարում այն ունենալու է քայքայիչ նշանակութիւն ՆԱՏՕ-ի համար. դա անկասկած է:

Ըստ այդմ՝ Արցախում Թուրքիայի սանձազերծած պատերազմը ըստ էութեան քայքայիչ է նաեւ Հիւսիսատլանտեան դաշինքի համար, եթէ անգամ չի արտացոլում անմիջապէս դրա անդամներին ուղղուած արկերի կամ բեկորների տեսքով: Ընդ որում, Թուրքիային այդ գործում ի հարկէ աջակցելու են նրանք, ում համար ՆԱՏՕ-ի վարկանիշային, հեղինակութեան քայքայումը եւս ռազմավարական նպատակ է:

«ԼՐԱԳԻՐ»

**ՄԱՍԻՍ**  
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՏՍԱԹԵՐԹ՝  
ՍՈՅՐԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՐԵ ԱՋԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

Շար.ը էջ 19

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հայաստանի Վարչապետ Նիկոլ Փաշինեան Այցելած է Արցախ



Հայաստանի վարչապետը եւ Արցախի նախագահը խորհրդակցութեան ընթացքին

Վարչապետ Նիկոլ Փաշինեան Հոկտեմբեր 5-ին այցելած է Արցախ: Վարչապետի աշխատակազմի տեղեկատուութեան եւ հասարակութեան հետ կապերու վարչութեան հաղորդմամբ՝ Փաշինեան Արցախի նախագահ՝ Արայիկ Յարութիւնեանի եւ Զինուած ուժերու բարձրագոյն սպայակազմի հետ կապուեցած է խորհրդակցութիւն: Արցախի պաշտպանութեան

նախարար, Պաշտպանութեան բանակի հրամանատար, գորավար՝ Ժալալ Յարութիւնեան զեկուցած է առաջնագիծին վրայ դաշտային իրավիճակի, ատրպէյճանական կողմէ սանձազերծուած պատերազմական գործողութիւններուն արժանի հակահարուած հասցնելու, ինչպէս նաեւ Զինուած ուժերու առաջիկայ քայլերու մասին, ըսուած է պաշտօնական հաղորդագրութեան մէջ:

Գյանջայի Ռազմական Օդանակայանը Յօդու Յնդեց Հակական Հրթիռներով



Գյանջայի ռազմական օդակայանը հրթիռակոծումէն առաջ

Արցախի Նախագահ Արայիկ Յարութիւնեանի հրամանով այսօր Պաշտպանութեան Բանակը ատրպէյճանական Գյանջայ քաղաքին մէջ տեղակայուած ռազմական կէտերու վնասագրծման նպատակով հասցուցած է մի քանի հրթիռային հարուած: Այս տեղեկութիւնը փոխանցելով Յարութիւնեան աւելցուցած է՝ «Այս պահի դրութեամբ յանձնարարել եմ դադարեցնել կրակը: Քաղաքացիական բնակչութեան շրջանում անմեղ զոհերից խուսափելու համար: Թշնամու կողմից համապատասխան հետեւութիւններ չանելու պարագայում մենք շարունակելու ենք համազօր ու հուժկու հարուածները: կազմալուծելով եւ կազմաքանդելով թշնամու բանակը եւ թիկունքը: Մենք մինչեւ վերջ վճռական ենք մեր գործողութիւններում: Կանգ առէք, քանի դեռ ուշ չէ»: Աւելի կանուխ Արցախի նախագահը յայտնած էր, որ ատրպէյճանական բանակը, օգտագործելով «Պոլոնեզ» եւ «Սմերչ» համակարգեր, թիրախ կը դարձնէ Ստեփանակերտի խաղաղ բնակչութիւնը: Միեւնոյն ժամանակ Արայիկ Յարութիւնեան զգուշացուցած էր, որ Ատրպէյճանի զինուորական կէտերը յայտնաբերելու կը դառնան Պաշտպանութեան Բանակի թիրախները: Աւելի ուշ նախագահի խօսնակ Վահրամ Պօղոսեանը յայտարարուեց. «Գյանջայի ռազմական օդանակայանը յօդու յնդեց»:

Նախագահ Սարգսեան Անընդունելի Կը Համարէ Իսրայէլական Զէնքի Մատակարարումը Ատրպէյճանին



Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեան եւ Իսրայէլի նախագահ Ռուվեն Ռիվլինի - արխիւ

Հայաստանի Հանրապետութեան նախագահ: Արմէն Սարգսեան հեռախօսազրոյց ունեցած է Իսրայէլի Պետութեան նախագահ Ռուվեն Ռիվլինի հետ: Այս մասին յայտնեցին ՀՀ նախագահի աշխատակազմի հասարակութեան հետ կապերու վարչութեանէն: Զրոյցի սկիզբը, նախագահները անդրադարձած են երկկողմանի յարաբերութիւններուն առնչուող հարցերուն: Նախագահ: Սարգսեան այնուհետեւ ներկայացուցած է Արցախի ու Հայաստանի սահմաններուն Ատրպէյճանի սանձազերծած ռազմական յարձակումի հետեւանքով ստեղծուած իրադրութիւնը: Նախագահ Սարգսեան նշած է, որ Իսրայէլի կողմէ Ատրպէյճանին վաճառուող զէնք-զինամթերքը իրականութեան մէջ ոչ միայն պաշտպանական նպատակներով կ'օգտագործուի, ինչպէս նախապէս կը հաւաստիացնէր Իսրայէլական կողմը, այլեւ՝ յարձակողական: Այդ զինատեսակները լայնօրէն կը կիրառուին հայկական բնակավայրերը հրետակոծելու նպատակով եւ քաղաքացիական խաղաղ բնակչութեան դէմ՝ յանգեցնելով մարդկային բազմաթիւ զոհերու ու հակապական աւերածութիւններու: Նախագահ Սարգսեան բոլոր շափանիչներով անընդունելի համարած է զէնքի շարունակական մատակարարումը: Ընդգծելով, որ այն լրջօրէն կարող է վտանգել Հայաստանի յարաբերութիւնները: Ան յորդորած է Իսրայէլի նախագահը, օգտագործել ազդեցութիւնը իր երկրի կառավարութեան վրայ: անյապաղ դադարեցնելու զէնքի մատակարարումները Ատրպէյճանին: Նախագահ Արմէն Սարգսեան տեղեկացուցած է, որ հայկական կողմի մտահոգութիւններն ու դիտարկումները արտացոլուած է նաեւ նախագահ Ռիվլինին ուղղուած նամակին մէջ: Նախագահ Ռիվլինը պատրաստակամութիւն յայտնած է իր երկրի կառավարութեան հետ ամենայն ուշադրութեամբ ուսումնասիրել հայկական կողմի բարձրացուցած հարցերը:

Երեւան Կը Վերահաստատէ Կրակի Դադրեցման Անհրաժեշտութիւնը

Հոկտեմբեր 6-ի առաւօտեան տարածած յայտարարութեամբ, պաշտօնական Երեւանը կը վերահաստատէ կրակի անյապաղ դադարեցման անհրաժեշտութիւնը, միաժամանակ շեշտելով, որ հակամարտութեան ռազմական լուծման ցանկացած փորձ պիտի կասեցուի: Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան տարածած յայտարարութեան նախորդած էր ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահ երկիրներու արտաքին գործոց նախարարներու կողմէ կողմերուն՝ «անյապաղ եւ անվերապահ հրադադար հաստատելու»: ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ Ֆրանսայի արտաքին գործոց նախարարները երէկ երեկոյեան տարածած յայտարարութեամբ՝ ամենայն խստութեամբ դատապարտած էին Լեւոնային Ղարաբաղի մէջ եւ անոր սահմաններէն դուրս, ինչպէս ձեւակերպած էին, բռնութեան աննախադէպ եւ վտանգաւոր մագլցումը: «Հայաստանը վերահաստատում է կրակի անյապաղ դադարեցման անհրաժեշտութիւնը, որի մասին ՀՀ Արտաքին Գործոց նախարարութիւնը արդէն իսկ հանդէս է եկել յայտարարութեամբ

2020 թուականի Հոկտեմբեր 2-ին: Մէկ անգամ եւս ընդգծում ենք, որ հակամարտութեան խաղաղ կարգաւորումը ու խաղաղ գործընթացն ալընտրանք չունեն, եւ ցանկացած փորձ՝ տանելու այն ռազմական լուծմանը վճռականօրէն կասեցուելու է», - ըսած է Արտաքին Գործոց նախարարութեան յայտարարութիւնը: Ռազմական գործողութիւնները անյապաղ դադարեցնելու կոչեր պատերազմի տասը օրերուն միջազգային հանրութեանէն բազմաթիւ եղած են: Ծօր առաջ Միացեալ Նահանգներու, Ռուսաստանի եւ Ֆրանսայի նախագահները համատեղ յայտարարութեամբ դարաբաղեան հակամարտութեան կողմերուն կոչ ըրին դադարեցնելու կրակը եւ վերսկսելու բանակցութիւնները: Այս երկիրներէն առանձին-առանձին ալ պարբերաբար նման կոչեր կը հնչեն: Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը առաւօտեան հաղորդեց, թէ զիջերը սահմանին համեմատաբար հանգիստ անցած է, իսկ եթէ սրացումներ ըլլան, պատասխանատուութիւնը պիտի կրէ Ատրպէյճանի ռազմաքաղաքական ղեկավարութիւնը:

ԼՈՒՐԵՐ

Հայկական Կողմը Դիրքային Որոշակի Յաջողութիւններ Ունի

Հայկական կողմը դիրքային որոշակի յաջողութիւններ ունի, կը տեղեկացնէ Արցախի նախագահի մամուլի խօսնակ՝ Վահրամ Պողոսեան: Դիրքային գրառման մէջ ան նշած է, որ իրավիճակը Արցախին մէջ կը շարունակուի կայուն-լարուած մնալ: Պաշտպանութեան բանակը բոլոր ուղղութիւններով նոր կորուստներ կը պատճառէ ատրպէյճանական զօրամիաւորումներուն, հաղորդած է Արցախի նախագահի խօսնակը:



Արցախի նախագահի մամուլի խօսնակ՝ Վահրամ Պողոսեան

Աւելի վաղ, Պաշտպանութեան նախարարութիւնը հաղորդած էր, որ զինուորը սահմանին վրայ համեմատաբար հանգիստ եղած է:

Արցախի պաշտպանութեան բանակը հրապարակեց գոհուած եւս 21 զինծառայողի անուն: Մինչ այս պահը հայկական կողմը հաղորդած է 240 կորուստի մասին: Ատրպէյճանական կողմը իր ռազմական կորուստներու մասին կը լռէ:

Պաշտպանութեան նախարարի խօսնակ՝ Շուշան Ստեփանեանն ալ դիրքային մէջ գրած էր, որ ատրպէյճանական կողմը կը շարունակէ կեղծ տեղեկութիւններ տարածել, թէ իբր հայկական զինուած ուժերը կը հրետակոծեն Ատրպէյճանի խաղաղ բնակավայրերը: Պաշտպանական գերատեսչութեան կրկին կը հերքեն այդ լուրերը: Ատրպէյճանը մինչդեռ կը պնդէր, թէ հայկական կողմը հրետակոծած է Պարտան, Կյանճան, Պէյլական եւ քանի մը այլ բնակավայրեր:

Հայկական կողմն ալ Ատրպէյճանը կը մեղադրէ Արցախի խաղաղ բնակչութեանն ու քաղաքացիական ենթակառուցուածքները թիրախաւորելու համար: Արցախի արտաքին գործոց նախարարութիւնը այսօր՝ Հոկտեմբեր 6-ի տարածած հաղորդագրութեան մէջ մասնաւորապէս կ'ըսէ, որ ատրպէյճանական կողմը հրթիռա-ռմբային հարուածներ կը հասցնէ Արցախի շարք մը բնակավայրերու ուղղութեամբ, անոնց կարգին՝ մայրաքաղաք Ստեփանակերտին, Շուշիին, Մարտակերտին, Մարտունիին

եւ Հատրուտին:

Արցախի նախագահ՝ Արայիկ Յարութիւնեան ժամեր առաջ գրած էր, որ Պաշտպանութեան բանակը իր առջեւ դրուած մարտական խնդիրը կատարած է փայլուն, եւ այս պահուն եւս յաջողութեամբ կը դիրքազրուէ Ատրպէյճանի բոլոր ոտնձգութիւնները, պատճառելով անոր գրահամեքենաներու եւ կենդանի ուժի զգալի կորուստներ:

«Թերեւս դա է եղել պատճառը, որ Ատրպէյճանի ահաբեկչական բանակը միայն «Սմերչ» կայանքից աւելի քան հարիւր հրթիռ է արձակել մայրաքաղաք Ստեփանակերտի ուղղութեամբ, սակայն, բարեբախտաբար, մեծ կորուստներ չեն եղել», - նշած է Յարութիւնեան:

Արցախի Հանրապետութեան նախագահի մամուլի խօսնակ՝ Վահրամ Պողոսեան ընդգծած է, որ կը բացառուի, որ դիմեն Ատրպէյճանի խաղաղ բնակչութեան թիրախաւորելու քայլին: Այս մասին դիրքատարի իր էջին գրած է Արցախի նախագահի խօսնակ՝ Վահրամ Պողոսեան:

«Քանի որ հրապարակուածներու տակ շատ են գրում, որ մենք էլ պէտք է թիրախաւորենք ատրպէյճանական խաղաղ բնակչութեան»

նը, միանգամից ասեմ, որ բացառուած է նման քայլի դիմենք: Մի պարզ պատճառով, որովհետեւ մենք թուրք չենք, բայց գիտենք ոնց կարելի է ջարդել նրանց ահաբեկչական բանակին:

Իսկ մեր կողմից այն հրթիռային հարուածները, որ հասցուում են խոշոր քաղաքներում տեղակայուած թշնամու ռազմական կառուցներին, դեռ հրապարակման ենթակաջ չեն: Պատերազմից յետոյ, եթէ կ'ուզէք մի ամբողջ տեսաշար կը ցուցադրենք: Ընդամէնը կարող եմ աւելացնել, որ դրանց հետեւանքով ոչ միայն վնասագրծուել են թշնամու պահեստային մեծաքանակ ուժեր, այլեւ արդէն 2 օր է դէպի Պաքու ձգուող մայրուղիներում մեծածաւալ խցանումներ են», - գրած է Պողոսեան:

Ստեփանակերտի ու այլ քաղաքներու Ատրպէյճանի թիրախաւորման հետեւանքով, շատ դէպքերուն շտապ օգնութեան ինքնաշարժները չեն կարողանար օգնութիւն հասցնել անոր կարիքը ունեցողներուն: Այսօրուայի ստույգի ընթացքին, յայտարարեց Հայաստանի Առողջապահութեան նախարար՝ Արսէն Թորոսեանը - «Ծանր եւ ծայրայեղ (ծանր) վիրաւորներ էլ ի հարկէ ունենք, որոնք կազմելով միգրացի աւելի փոքր տոկոս ընդհանուր վիրաւորների թուի մէջ, ի հարկէ սակայն պահանջում են առաւել ուշադրութիւն, եւ հենց նրանց է ուղղուած բժշկական հաստատութիւնների եւ անձնակազմի ամենամեծ ուշադրութիւնը, որպէսզի նրանց կեանքին վտանգ չսպառնայ, եւ նրանք փրկուեն»:

Ան նաեւ տեղեկացուց, որ Արցախի մէջ ռազմական գործողութիւններու հետեւանքով վիրաւորում ստացած զինծառայողներու մեծ մասի վիճակը միջին եւ թեթեւ ծանրութեան է:

Թորոսեան ըսաւ, թէ շուտով թէ՛ գիծ կը գործէ եւ որմով հարազատները կրնան տեղեկանալ վիրաւորում ստացած իրենց զինծառայողներու առողջական վիճակի վերաբերեալ:

Ըստ ՌԴ Արտաքին Դեսպալուզութեան Տեղեկութիւններուն, ԼՂ Հակամարտութեան Գօտիէն Ներս կը Ներգրաւուին Վարձկան Զինեալներ

Ռուսաստանի արտաքին հետախուզութիւնը տեղեկութիւններ ունի, որ դարաբաղեան հակամարտութեան գօտիէն ներս աշխուժօրէն կը ներգրաւուին վարձկան զինեալներ Մերձաւոր Արեւելքի ահաբեկչական խմբաւորումներէն:

«Ըստ առկայ տուեալներուն, միջազգային ահաբեկչական կազմակերպութիւններու, մասնաւորապէս՝ «Ճապհաթ Ալնուարայի», «Ֆիրքաթ Համգայի», «Սուլթան Մուրատի», ինչպէս նաեւ ծայրայեղական քրտական խմբաւորումներու զինեալները կը տեղափոխուին հակամարտութեան գօտի: Աւելին՝ մենք կը խօսինք հարիւրաւոր եւ նոյնիսկ հազարաւոր ծայրայեղականներու մասին, որոնք փող վաստակելու ակնկալիքներ ունին դարաբաղեան նոր պատերազմին», - յայտարարած է Ռուսաստանի արտաքին հետախուզութեան տնօրէն՝ Սերկէյ Նարիշքինը:

«Մեզի չի կրնար չանհանգստացնել, որ Անդրկովկասը կրնայ դառնալ միջազգային ահաբեկչական կազմակերպութիւններու նոր հաւաքատեղի, ուրկէ գրոհայինները հետագային կրնան ներթափանցել Ատրպէյճան եւ Հայաստանին յարող պետութիւններ, ներառեալ՝ Ռուսաստան», - ընդգծած է Նարիշքինը:

Ֆրանսան եւս յայտարարած է, թէ ունի ստույգ տեղեկութիւններ, որ Թուրքիայէն տեղափոխուած սուրիացի իսլամիստները կը մասնակցին Լեռնային Ղարաբաղի մէջ ծաւալուող ռազմական գործողութիւններուն: Պաշտօնական Պաքուն ու Անգարան, սակայն, կտրականապէս կը հերքեն այդ մեղադրանքները:

Amnesty International-ը Կը Հաստատէ, Որ Ստեփանակերտը Ռմբակոծուած Է Միջազգայնօրէն Արգիլուած Ռումբերով



Amnesty International իրաւապաշտպան կազմակերպութիւնը յայտարարած է, որ իր փորձագէտները Ստեփանակերտի մէջ հաստատած են, թէ Արցախի մայրաքաղաքը ռմբակոծուած է իսրայէլական արտադրութեան քասեթային՝ միջազգայնօրէն արգիլուած ռումբերով:

պուլթիւնը կը յայտարարէ, որ քասեթային ռումբերու որեւէ կիրառում արգիլուած է, եւ գանոնք օգտագործելը բնակելի շրջաններու մէջ կրնայ աւելցնել զոհերու եւ վիրաւորներու թիւը:

Amnesty International-ը նաեւ կը շեշտէ, որ թէեւ Ատրպէյճանը հաղորդած է իր մեծութեամբ երկրորդ քաղաքի՝ Կյանճայի եւ այլ

Ալիւ. Թուրքիան Անպայման Պէտք Է Ներկայ Ըլլայ ԼՂ Հակամարտութեան Կարգաւորման Գործընթացին

Թուրքիան անպայման պէտք է ներկայ ըլլայ դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործընթացին, նման կարծիք յայտնած է Ատրպէյճանի նախագահ: Իհնամ Ալիւն թրքական TRT Haber հեռուստաընկերութեան հետ զրոյցի ընթացքին:

«Թուրքիան ուժեղ պետութիւն է, մեծ հնարաւորութիւնով, մեր հարեանը, Հայաստանի հարեանը, Հարաւային Կովկասի հարեանը: Այդ իսկ պատճառով, բնականաբար, Թուրքիան պէտք է աշխոյժ ըլլայ այդ գործերուն մէջ: Հետագայ խաղաղ գործընթացին,

Թուրքիան անպայման պէտք է ներկայ ըլլայ», - ըսած է Ալիւնը: աւելցնելով, որ խաղաղ գործընթացը կը սկսի. - «Եւ որքան շուտ, այնքան լաւ, պատերազմը չի կրնար յարատեւ ըլլալ», - նաեւ յայտարարած է Ատրպէյճանի առաջնորդը:

Միջազգային կառույցներն ու խնդիրի կարգաւորմամբ զբաղող երկիրները հրադադարի կնքման օրուընէ մինչեւ օրս կը պնդեն, որ որպէս դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման միջնորդ միակ եւ ընդունելի ձեւաչափը ԵԱՀԿ Մինսքի խումբն է:

բնակավայրերու հրետակոծութեան մասին, եւ չնայած իրաւապաշտպան կազմակերպութեան փորձագէտները հաստատած են, որ 300 միլիմետր տրամաչափի «Սմերչ» հրթիռային համակարգերը իսկապէս օգտագործուած են հայկական ուժերու կողմէ, Պաքուի ներկայա-

ցուցած լուսանկարը եւ տեսաերիզային ապացոյցները դեռեւս թոյլ չեն տար եզրակացութիւն ընելու որ յատուկ կը թիրախաւորէ, ինչպէս նաեւ այն մասին, թէ հրթիռային մարտագլխիկներուն մէջ կա՞յ արդեօք քասեթային զինամթերք:

### Մաքրոն Կը Յորդորէ ՆԱԹՕ-ի Գործընկերները Առերեսուիլ Թուրքիոյ Վարքագիծին Հետ

Ֆրանսան կը մեղադրէ Թուրք-իան սուրիացի զինեալներուն Լեռնային Ղարաբաղ ուղարկելու մէջ: Այս «լուրջ նոր փաստը» կը փոխէ իրավիճակը, ըսած է նախագահ: Էմմանուէլ Մաքրոն:

Թուրքիան, ինչպէս յայտնի է, կը հերքէ վարձկաններու մասնակցութիւնը զարաբաղեան հակամարտութեան գոտիի ռազմական գործողութիւններուն:

«Այժմ մենք ունինք տեղեկատուութիւն, որ ցոյց կու տայ, որ ճիշատիստական խմբաւորումներու սուրիացի գրոհայինները անցած են Կազիանթեի [քաղաք Թուրքիոյ հարաւ-արեւելքը, նախկին Այնթապ]: Լեռնային Ղարաբաղի պատերազմի թատերաբեմ հասնելու համար», - Երէկ Պրիւքսէլի մէջ տեղի ունեցող Եւրամիութեան գաղաթնաժողովին հասնելուն պէս, լրագրողներուն ըսած է Մաքրոն: «Այս շատ լուրջ նոր փաստ է, որ կը փոխէ իրավիճակը», - ընդգծած է Ֆրանսայի նախագահը:

Այսօր: Հոկտեմբեր 2-ին, Մաքրոն Թուրքիայէն պահանջած է բացատրել զինեալ գրոհայիններու



Ժամանումը Ատրպէյճան եւ յորդորած է ՆԱԹՕ-ն առերեսուիլ իր դաշնակիցի գործողութիւններուն, կը հաղորդէ France-Presse լրատուական գործակալութիւնը:

«Կարմիր գիծը հատուած է, ինչ որ անընդունելի է: Ես ՆԱԹՕ-ի բոլոր գործընկերները կը յորդորեմ առերեսուիլ ՆԱԹՕ-ի անդամի վարքագիծին», - յայտարարած է Ֆրանսայի նախագահը:

### Փոմփեօ. ԱՄՆ-ը Հրադադարի Կոչ Կ'ընէ Եւ Կը Դատապարտէ Երրորդ Ուժերու Սիջանտութիւնը ԼՂ Հակամարտութեան

Միացեալ Նահանգները կոչ կ'ընէ հակամարտող կողմերուն հրադադար հաստատելու եւ կը դատապարտէ երրորդ ուժերու միջամտութիւնը, ըսած է պետական քարտուղար Մայք Փոմփեօն Fox News-ին տուած հարցազրոյցի ընթացքին:

«Մենք դէմ ենք, որ այս հակամարտութիւնը միջազգային բնոյթ ստանայ, եւ կը կարծենք, որ կողմնակի ուժերը պէտք է հեռու մնան: Մենք հրադադարի կոչ կ'ընենք», - ըսած է Փոմփեօն: Ընդգծելով, որ ամերիկեան վարչակազմը խօսած է Հայաստանի եւ Ատրպէյճանի առաջնորդներուն հետ, յորդորելով դադարեցնել կրակը:

«Յոյսով ենք, որ առաջիկայ օրերուն անոնք կը համոզուին, որ անհնար է ռազմական ճանապարհով կարգաւորել ցեղային ու քաղաքական հակամարտութիւնները, իսկ երրորդ երկիրներու միջամտութիւնը միայն կը խորացնէ խնդիրը», - ըսած է ԱՄՆ-ի պետական քարտուղարը:

Աւելի վաղ, Հայաստանի կառավարութիւնը հաղորդած էր, որ վարչապետ Նիկոլ Փաշինեան հե-



ռախօսազրոյց ունեցած է Սպիտակ տան Ազգային անվտանգութեան հարցերով խորհրդական: Ռապըթ Օ'Պրայընի հետ:

Ըստ պաշտօնական Երեւանի, Փաշինեան շեշտած է վարձկաններու եւ ահաբեկիչներու տարածաշրջանէն դուրս մղելու անհրաժեշտութիւնը եւ առանց որու անհնար է հրադադարի հաստատումը:

### Լոս Անճելըսի Հայութիւնը Ձօրաշարժի Մէջ

Շարունակուած էջ 1-էն

րոշուին Արցախի ժողովուրդի արդար իրաւունքներու կողքին:

Անցնող շաբթուայ ընթացքին տեղի ունեցան ցոյցեր՝ Ատրպէյճանի հիւպատոսարանին առջեւ, Կլէնտէլի Քաղաքապետարանին մօտ եւ CNN հեռատեսիլի ընկերութեան Հոլիվուտի մէջ գտնուող շէնքին առջեւ:

Շաբաթավերջին, խումբ մը երիտասարդներ կարողացան որոշ ժամանակ փակել դէպի Հոլիվուտ

տանող թիւ 170 ազատուղին:

Հազարաւոր ցուցարարներ երկու օր շարունակ մնացին CNN-ի շէնքին առջեւ պահանջելով որ, լրատուական այդ ալիքը չանտեսէ կովկասի տարածաշրջանէն ներս տեղի ունեցող իրադարձութիւններ եւ անաչառ տեղեկութիւններ փոխանցէ Ամերիկեան հանրութեան:

Յուցարարները հեռացան, CNN-ի ղեկավարութենէն հաւաստիացումներ ստանալէ ետք, որ աւելի լայն ձեւով պիտի անդրադառնան պատերազմական իրավիճակին:

### ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդը Կը Դատապարտէ Ղարաբաղի Մէջ Ռազմական Գործողութիւնները



ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդը խստօրէն կը դատապարտէ Ղարաբաղի մէջ վերսկսուած ռազմական գործողութիւնները, որոնք կը սպառնան վերածուելու լայնածաւալ պատերազմի: Սեպտեմբեր 29-ին, այս հարցի շուրջ Նիւ Եորքի փակ դռներու ետեւ տեղի ունեցած քննարկումներէն յետոյ, կառուցի անդամ 15 պետութիւնները կոչ ուղղեցին կողմերուն անմիջապէս դադարեցնելու բախումները եւ անյապաղ վերսկսելու բովանդակային բանակցութիւնները՝ առանց որեւէ նախապայմանի:

Յայտարարութիւնը, որ ընդունուած է միաձայն, աջակցութիւն կը յայտնէ նաեւ ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղար: Անթնիօ Կուրթիերեսին, որ աւելի վաղ հեռախօսազրոյցներ ունեցած էր Հայաստանի ու Ատրպէյճանի առաջնորդներուն հետ եւ կոչ ըրած դադարեցնելու կրակը ու հակամարտութիւնը կարգաւորելու խաղաղ ճանապարհով՝ Մինսքի խումբի համանախագահներուն հետ:

Վերջին անգամ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդը դարա-

բաղեան հակամարտութիւնը քննարկած էր մօտ երեք տասնամեակ առաջ՝ 1993 թուականին: Այս անգամ քննարկումը նախաձեռնած էր Անվտանգութեան Խորհուրդի ոչմշտական անդամ Էսթոնիան: Ըստ որոշ հաղորդումներու, պալթեան պետութեան այդ հարցով աջակցած էին նաեւ եւրոպական շարք մը պետութիւններ, անոնց կարգին՝ Անվտանգութեան Խորհուրդի մշտական անդամներ Ֆրանսան ու Մեծ Բրիտանիան:

Հայաստանի ու Ատրպէյճանի դեսպանները քննարկման ներկայ չէին, Անվտանգութեան Խորհուրդի նախագահ: Ապտոն Ապտրին, սակայն, չէ բացառած, որ ՄԱԿ-ը կրնայ նաեւ քննարկում նախաձեռնել անոնց մասնակցութեամբ:

«Եթէ անհրաժեշտութիւն ըլլայ, մենք կը խօսինք նաեւ երկու դեսպաններու հետ, որպէսզի անոնք կարողանան փոխհամաձայնութեան գալ», - ըստ ԹԱՍՍ գործակալութեան, ըսած է Անվտանգութեան Խորհուրդի նախագահը: Այլ մամուլային աղբյուրներ նիստէն չեն հաղորդուած:

### Հայկական Բանակը Բոլոր Ծակատներու Վրայ

Շարունակուած էջ 1-էն

ցուցչի հետ իրավիճակի առնչութեամբ ունեցած խօսակցութեան մասին, Փաշինեան ըսած է. «Ես

որովհետեւ Միացեալ Նահանգները ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկիր է, որն զբաղուած է Ղարաբաղի հարցի կարգաւորմամբ: Փաշինեան շատ յստակ արձա-



հեռախօսային խօսակցութիւն եմ ունեցել նախագահ Թրամփի ազգային անվտանգութեան հարցերով խորհրդական պարոն Օ'Օպրայընի հետ: Եւ այդ օրը երեկոյեան էր, որ լսեցինք պարոն Թրամփի կորոնավիրուսով վարակուելու մասին լուրը: Բայց ամէն դէպքում մենք կապի մէջ ենք ամերիկեան գործընկերների հետ,

նագրած է, որ Թուրքիա կը քաջալերէ Ատրպէյճանի յարձակումը ընդդէմ Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի: Ան շատ յստակ արձանագրած է, որ կան Սուրիայէն եկած վարձկաններ, որոնք Թուրքիոյ կողմէ տեղափոխուած են հակամարտութեան գոտի՝ Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի դէմ պատերազմելու համար:

# Սա մի նոր Սարգսյանն է. ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի Ուղերձը Հայ Ժողովուրդին



ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն Շաբաթ երեկոյան հանդես եկավ հայ ժողովուրդին ուղղված ելույթով.

«Սիրելի ժողովուրդ, Հայաստանի Հանրապետության հպարտ քաղաքացիներ,

Արցախի Հանրապետության հպարտ քաղաքացիներ,

Սփիւռքի հպարտ հայրեր,

Արդէն գործնականում մէկ շաբաթ հայ ժողովուրդը՝ Արցախում եւ Հայաստանում, դիմակայում է ատպէջման թուրքական անարդարական յարձակմանը: Յարձակման մասշտաբները անսխալ է պարզ, թշնամի գրոհում է անսխալ ծաւալներով, որ ըստ ռազմական փորձագետների 21-րդ դարում յաճախ չի պատահել աշխարհի որեւէ հատուածում, հակամարտության գոտիներից որեւէ մէկում:

Հարիւր տարիներ եւ հետեւեւեւի մարտական մեքենաներ, հազարավոր արկեր եւ հրթիռներ, տասնեակ ինքնաթիռներ, հարիւրավոր անօդաչու թռչող սարքեր եւ տասնեակ հազարավոր հետեւակ՝ արդէն մէկ շաբաթ գրոհում են Արցախի պաշտպանական բանակի դիրքերը՝ շփման գծի ամբողջ երկայնքով:

Նախորդ օրուայ մեր վերլուծութիւնները ցոյց տուցին, որ Արցախի պաշտպանութեան բանակի մէկ մարտական դիրքի վրայ գրոհի է նետում մօտավարպէս 150-ից 200 թշնամական զինուոր, ընդ որում այսպիսի գրոհները կրկնում են օրուայ մէջ մի քանի անգամ, ուղեկցում են հրթիռային եւ անարդարական հրետանու, զրահատեխնիկայի, օդանավերի, անօդաչու թռչող սարքերի ջանքերով: Մեր զինուորականների վկայութեամբ, բացի ադրբեջանական բանակի ստորաբաժանումներից, գրոհներին ներգրավուած են սիրիացի վարձկաններ ու անհրաժեշտ կիներ, թուրքական բանակի յատուկ ջոկատայիններ:

Մեր տեղեկութիւններով թուրքական բանակի շուրջ 150 բարձրաստիճան զինուորականներ գտնուած են Ադրբեջանի զինուած ուժերի տարբեր օղակների հրամանատարական կէտերում եւ դեկավարում են ռազմական գործողութիւնները:

Այս նկարագրութիւնն ինքնին պիտի վկայի, թէ ինչպիսի ծանր մարտեր են տեղի ունենում առաջնագծում: Արդէն մէկ շաբաթ՝ Արցախի պաշտպանութեան բանակը, մեր կամաւորական ջոկատները կենաց եւ մահու կռիւ են տալիս Արցախի սրբազան հողի

վրայ: Այս պահի դրութեամբ արդէն ունենք բազմաթիւ մարդկային կորուստներ՝ զինուորական եւ քաղաքացիական, շարքից դուրս է եկել մեծ թուով զինտեխնիկայ, բայց հակառակորդը այդպէս էլ ի վիճակի չի եղել լուծել որեւէ ռազմավարական խնդիր:

Աներեւակայելի է այն տոկոսութիւնը, որով մեր զինուորները, սպաները, գեներալներն ու ազատամարտիկները կանգնած են հրոսակային այս յարձակմանը յանդիման: Մեր զինուորներն ու կամաւորները չեն խնայում ոչինչ եւ հերոսութեան աներեւակայելի օրինակներ են ցոյց տալիս: Այսօր մարտի դաշտում հակառակորդի հարիւրավոր ոչնչացումը գրահատեխնիկայ կայ, տասնեակ օդանավեր եւ ուղղաթիռներ, հարիւրավոր անօդաչու թռչող սարքեր, մարդու զինուորականները հակառակորդի անցնում են մի քանի հազարը:

Այս պահի դրութեամբ էլ թէ՛ մարտերը շարունակում են առաջնագծի տարբեր հատուածներում, որոշ տեղերում Պաշտպանութեան բանակի զորքերը գտնուած են բաւականին ծանր դրութեան մէջ, որոշ տեղերում վստահօրէն տիրապետում են իրավիճակին:

Սիրելի հայրենակիցներ, եղբայրներ եւ քոյրեր.

Մենք ապրում ենք մեր հազարամեայ պատմութեան թերեւս ամենավճռորոշ փուլում: Ադրբեջանաթուրքական հրոսակային միայն ռազմական կամ ռազմաքաղաքական հարց լուծելու նպատակ է, որ հետապնդում են:

Նրանք միայն Ղարաբաղի կամ Ղարաբաղի հարցի ետեւից չէ, որ եկել են: Նրանք չեն եկել միայն տարածքներ, գիւղեր կամ քաղաքներ գրաւելու: Նրանց նպատակը հայրենիքն է, նրանց նպատակը Հայոց ցեղասպանութեան իրենց քաղաքականութեան շարունակութիւնն է, եւ նրանք խնդիր են դրել Հայոց ցեղասպանութիւնը շարունակելու:

Բայց այսօր, այստեղ ուզում ենք ասել, որ հիմա այլեւս՝ հայր, Հայաստանի Հանրապետութեան քաղաքացին, Արցախի Հանրապետութեան քաղաքացին Դեր Զօրի ճամփորդը չէ: Այսօր, քան երբեք, մենք համակուած ենք մեր ինքնութիւնը, մեր հայրենիքը, մեր իրաւունքը պաշտպանելու անխորտակելի վճռականութեամբ:

Դրանում համոզուել ենք նաեւ՝ երեկ երեկոյան հեռախօսագրոց ունենալով Արցախի Պաշտպանական շրջանների հրամանատարների, դիվիզիաների հրամանատարների, անգամ առաջնագծում

# ՀՀ Նախագահ Արմէն Սարգսեանի Ուղերձը Սփիւռքին



Սիրելի հայրենակիցներ, թանկագին քոյրեր եւ եղբայրներ,

Մեծ հիացմունք, խոր յուզմունք եւ անսահման հպարտութիւն կ'ապրիմ՝ տեսնելով, լսելով ու զգալով համերաշխութեան, միասնութեան այն հուժկու ալիքը, որ բարձրացած է Սփիւռքի մէջ՝ ի արձագանգ Արցախի եւ Հայաստանի սահմաններում Ատրպէյճանի եւ թուրքի կողմէ համատեղ սանձազերծուած պատերազմի:

Կ'ուզեմ, որ իմ անաք՝ Հայրենիքը կը լսէ եւ կը զգայ իւրաքանչիւրիդ ձայնը, իւրաքանչիւրիդ խօսքը, ձեր սրտերու անհանգիստ բաբախիւնը, ուր ալ ըլլաք, ինչքան ալ հեռու գտնուիք:

Այսպիսի հզօր ու ամուր Սփիւռքը իսկական բանակ է, որ սատար է Հայրենիքին ու քաջարի Հայոց բանակին այս դժուարին, ճակատագրական պահին:

Հայրենիքը երախտապարտ է այն օգնութեան համար, որ կը ցուցաբերէք Ձեր նիւթական աջակցութեամբ, «Հայաստան» համահայկական հիմնադրամի նախաձեռնած «Մենք ենք, մեր սահմանները. բոլորս Արցախի համար» համագաղափար դրամահաւաքին ձեր աշխոյժ մասնակցութեամբ:

Ձեզմէ իւրաքանչիւրը այսօր Հայաստանի եւ Արցախի դեսպանն է դուրսը: Դուք բոլոր հնարաւոր միջոցներով՝ հաւաքներով, կոչե-

րով, դիմումներով եւ ելույթներով ամէն ինչ կ'ընէք ճշմարտութիւնը, Արցախի ձայնը հասցնելու միջազգային հանրութեան, ընդ որում՝ ձեր երկիրներու կառավարութիւններուն՝ ներկայացնելու թուրքի օժանդակութեամբ Ատրպէյճանի սանձազերծուած յարձակման անմարդկային էութիւնը:

Վստահ եմ՝ կը գիտակցիք, որ ներկայ իրավիճակին մէջ պէտք է շարունակենք բազմապատկել մեր ջանքերը:

Շարունակեցէ՛ք նոյն ոգիով եւ նոյն նուիրուածութեամբ, որովհետեւ այս անգամ մեր դէմ՝ Արցախի ազատատենչ ժողովուրդի դէմ ելած է ոչ միայն Ատրպէյճանը, այլեւ՝ ցեղասպան թուրքիան՝ իր գէնքով, զինուորականով ու վարձկան անհրաժեշտներով, իր հայատեաց խօսքով ու գործով: Մա այն նոյն թուրքիան է, որ 105 տարի առաջ հայերու էթնիկ գտնումներ եւ ցեղասպանութիւն իրականացուց Օսմանյան կայսրութեան մէջ:

Այս անգամ այդ պիտի չանցնի, մենք թոյլ չենք տար նոր ցեղասպանութիւն: Մեր համաշխարհային ազգը հզօր է իր միասնութեամբ ու հաւաքական ուժով: Որեւէ կասկած չկայ, որ մենք պիտի յաղթենք:

Մենք անյաղթ ենք մեր ամենայաղթ միասնութեամբ:

Յաղթանակը մերը պիտի ըլլայ: Աստուած պահպան բոլորիս:

գտնուող մի շարք շարքայինների, սպաների եւ ենթասպաների հետ:

Նրանց ասել եմ, որ սիրում եմ բոլորին, հպարտանում եմ իրենցով, խոնարհում եմ իրենց առաջ: Նրանց ասել եմ, որ հայ ազգը, որ նահատակ եւ կենդանի հերոսների շնորհիւ ճաշակել են յաղթանակի անզուգական համբ, այլեւս համաձայն չէ որեւէ ուրիշ ճակատագրի:

Յաղթանակը, միայն ու միայն յաղթանակը, բացառապէս յաղթանակն է այն աւարտը, որը մենք պատկերացնում ենք այս պայքարի վերջում: Այսօր արդէն Արցախի պաշտպանութեան բանակը իրականացրել է ակտիւ հակադարձակողական գործողութիւններ եւ հասել էական յաջողութիւնների՝ ջախջախելով թշնամական մի քանի յատուկ նշանակութեան ստորաբաժանում:

Մեր թշնամին որքան էլ վարձկան հրոսակների առատ հոսք ունենայ, չի կարող մրցակցել ապրելու եւ յաղթելու հայկական կամքի հետ, ու մենք համատեղ ջանքերով պիտի կոտրենք յարձակողու ոտիս ողնաշարը, որ նա այլեւս երբեք, այլեւս երբեք իր ոճրագործ ձեռքերը չպարզի մեր ուղղութեամբ, իր արիւնոտ հայեացքը չուղղի մեր

հայրենիքին:

Սիրելի ժողովուրդ, Հայաստանի Հանրապետութեան հպարտ քաղաքացիներ,

Արցախի Հանրապետութեան հպարտ քաղաքացիներ,

սփիւռքի հպարտ հայրեր.

Մա մի նոր Սարգսյանն է եւ մեզինց իւրաքանչիւրը պարտավոր է ինքը իրեն նուիրել մէկ նպատակի եւ այդ նպատակի անունն է յաղթանակ:

Եւ մեզինց իւրաքանչիւրը ամէն վայրկեան պիտի պատրաստ լինի գտնուել այդ յաղթանակի առաջնագծում: Ու մենք կը յաղթենք, որ մենք անպայման կը յաղթենք, մենք անպայման կը յաղթենք, ու չկասկածէք, մենք անպայման կը յաղթենք:

Եւ ուրեմն՝

Կեցցէ Ազատութիւնը

Կեցցէ Հայաստանի Հանրապետութիւնը

Կեցցէ Արցախի Հանրապետութիւնը

Եւ կեցցեն մեր երեխաները, որ ապրելու են Ազատ եւ Երջանիկ Հայաստանում

Փառք ընկած հերոսներին  
Փառք Հայոց յաղթական բանակին»:

# Պարտադրուած Կենսակերպ

Միա՞ն Արցախի Հանրապետութեան դէմ է պատերազմը. ո՛չ: Հայաստանի Հանրապետութեան դէմ է պատերազմը. ո՛չ: Այլեւ, ակնյայտ է, որ այս անգամ պատերազմը ողջ հայութեան դէմ է: Հայո՛ւ տեսակին դէմ է:

Ատրպէյճան միայնա՞կ նախաձեռնեց պատերազմը. ո՛չ: Միա՞ն թուրքիան ամբողջապէս գործադիր է ազերիական նախադրածակման. ո՛չ: Այլեւ, ակնբախ է, որ իսրայէլ առատորէն զինած է իր դաշնակիցն ու հոգեկիցը՝ Ատրպէյճանը:

27 Սեպտեմբերին իրավիճակը կտրուկ փոխուեցաւ հարաւային կովկասի մէջ, երբ Պաքու լայնածաւալ չարձակում շրջապատեց Արցախի Հանրապետութեան սահմաններուն վրայ, ընդհուպ թիրախաւորելով քաղաքայիններ: Սա, 1994-ի զինադադարէն ետք, ամենաճարտուն եւ ամենավտանգալից գորաշարժն է որ կատարեց Ատրպէյճան՝ աննախընթացորէն սրելով կացութիւնը: Այժմ, ստեղծուած է իրավիճակ մը, որ ոչ ոք կրնայ կանխատեսել հետեւանքները անոր:

Հայ-ատրպէյճանական համարտութեան պատմութեան մէջ բացուեցաւ նոր եւ արիւնալի էջ մը: Մինչայդ, եթէ կը խօսուէր Արցախի կարգավիճակին եւ անոր ճակատագիրին մասին, հայ-ատրպէյճանական բանակցութիւնները կեղծոնացած էին արցախեան համարտութեան հանգուցալուծման հնարաւորութեանց շուրջ, անդին՝ անթաքտիցորէն Պաքուի հեռագնայ նպատակները կը հասնէին մինչեւ Հայաստանի գոյութեանն իսկ: Այն հոետորաբանութիւնը որ որդեգրուած էր Պաքուի վերնախաւին կողմէ՝ արհամարհելով Երեւան անունը եւ զայն կոչելով էրիվան (ազերիական տարբերակ), Հայաստանի Հանրապետութիւնը՝ նախկին «էրիվանի խանութիւն» եւ նմանատիպ ցնդաբանութիւններ, արդէն նախանշաններն էին որ հայութիւնը գործ ունէր հաւասարակշռութենէ դուրս ելած իշխանութիւններու հետ, կացութենէն անտեղեակ արկածախնդիրներու հետ:

Ատրպէյճանի յոխորտալից սոյն քայլը կը գլխէ կ'անցնի տրամաբանութեան ամէն սահման: Անոր ռազմատենչ վարքագիծը՝ ի դէմս հայկական խաղաղասիրական ձգտումներուն, ցոյց կու տայ, թէ Պաքու ապաւինած է պատերազմի ընտրանքին, կը ձգտի խօսիլ զէնքի ու արեան լեզուով: Կարծէք ան չի սիրեր դասեր քաղել պատմութենէն կամ անսալ իր իսկ սեփական դառնալեղի փորձառութեան:

Նախ՝ տմարդիութիւնը կը կայանայ ընտրուած ժամկէտին մէջ, երբ ողջ երկրագունդը կը գտնուի համաճարակի մը աղէտին դէմ յանդիման: Արտասովոր այս օրերուն, երբ մարդկութիւնը միասնական ջանքերով կը փորձէ չէզոքացնել համակործան վարակը՝ փոխ-օգնութեան ու մարդասիրական սկզբունքներով, ահա Պաքու կը մերկացնէ իր ողջ տգեղութիւնն ու բարբարոսական բնագղը:

Ապա՝ ինդրարկուի եւ թուլամորթի ստորաքարչ նկարագիրով իր ծրագիրներուն իրագործման համար կ'ապաւինի այլոց՝ թուրքիոյ, իսրայէլի, վարձկան կռուողներու եւ թափթիփութեան: Երկհոտի մը բոլոր ստորոգելիները կրեւով իր վրան՝ կը պարծենայ խաղաղ բնակիչներ սպաննելով: Եթէ իր

նպատակն էր զինու գորութեամբ հակամարտութեան լուծումը եւ նշաւակել Հայաստանը, ապա ինչո՞ւ 1994-ին կը թախանձէր զինադադար, ինչո՞ւ կը բանակցէր միջազգային հաշտարար ուժերու միջնորդութեամբ, ինչո՞ւ կը սակարկէր կամ կ'ուզէր պարտադրել իր քմահաճ պայմանները:

Ընկ. Սարգիս Սարգիսեան (Հ.Մ.Մ.ի կեդրոնական վարչութեան փոխ ատենապետը), փոքր տարիքին նետուեցաւ կեանքի ասպարէզ: Ան իր հմուտ արհեստագիտութեան մէջ ցուցաբերելով բարձր արժանիքներ, դարձաւ կանացի կօշիկներու գեղարուեստական ձեւաւորումներու ինքնատեղծ նորարարութիւններու միջազգային չափանիշով հեղինակ եւ այդ բնագաւառին մէջ եղաւ յաջող գործարար մը:

Որպէս նուիրեալ գործիչ եւ առատաձեռն բարերար՝ ընկ. Սարգիս Սարգիսեան իր հետեւողական նուիրատուութիւններով, բուժիչ բաւասանը հանդիսացաւ զանազան դժուարին հարցերու բարօք լուծման գործին մէջ: Միայն մէկ օրինակ մը կ'ուզեմ մէջբերել այստեղ, երբ 60ական թուականներուն Հ.Մ.Մ.ի ֆուտպոլի ախոյեան խումբը Հայաստան հրաւիրուած էր, յանկարծ օդանաւի տոմս գնելու



1961-1962 խաղաշրջանին, Լիբանանի ախոյեան Հ.Մ.Մ.ը

դրամական տագնապ մը կը յառաջանայ: Մեր հանգուցեալ բարերարը՝ ինք իսկույն կը լուծէ հարցը եւ իր սեփական պիւտճէէն 22 հոգինոց պատուիրակութեան տոմսերը կը գնէ որպէս նուէր:

որոնց մօտ անթեղուած կը մնան չիշատակելի հաճելի պահերը:

Ընկեր Սարգիս Սարգիսեան սերմնացանի մը նման բացառիկ գործեր կատարեց, ցանեց միշտ եւ ամէն տեղ, թէ իր կուսակցական եւ թէ մարզական ու ընկերային շրջապատին: Կարծէք թէ իր առաքելութիւնն էր նուիրուել բարիին ու վսեմին:

97 ամեայ մեր վեթերան ընկերը միշտ ալ գնահատուեցաւ եւ

Շար.ը էջ 17

Կանուխ տարիքէն՝ անխոնջ նուիրեալ մը եղաւ եւ մեծ քաջալերող մը Հայ Մարմնամարզական Միութեան, յատկապէս Պուրճ Համուտի Հ.Մ.Մ.-Մասիս ակումբի շրջանակէն ներս, հանդիսանալով անոր գործունեայ անդամներէն եւ ապա վարչութեան ատենապետ՝ 1953-1954 թուականներուն:

Ան հաւատաւոր անդամն էր նաեւ իր շրջանի Ս.Գ. Հնչակեան կուսակցութեան մասնաձիւղին: Հոն եւս ցուցաբերելով աշխոյժ գործունէութիւն, յետագային ընտրուեցաւ որպէս ՍԳՀԿ Լիբանանի շրջանի վարիչ Մարմնի անդամ:

Ընկերային գետնի վրայ Սարգիս Սարգիսեան մեծ ներդրում ունեցաւ մասնաւորաբար Հ.Մ.Մ.ի մէջ: Այստեղ առաւել փայլուն աստղ մը դարձաւ իր գեղեցիկ նախաձեռնութիւններով, միշտ կորովի, ծառայասէր, բարեխիղճ եւ անաչառ մօտեցումներով դարձաւ սիրելի անձնաւորութիւն մը: Իր միակ մտահոգութիւնն էր երիտասարդութեան առողջ դաստիարակութիւնն ու վերելքը: Օգնութեան ձեռք կ'երկարէր բոլորին թէ հաւաքական եւ թէ անհատական մակարդակներու վրայ: Տեսլական ունեցող մարդ մըն էր ան:

Հպարտ էր Մայր Հայրենիքով եւ անոր յառաջընթացով, յատկապէս մարզական եւ մշակութային բնագաւառներուն մէջ: Իր գեղեցիկ նախաձեռնութիւններէն կարելի է յիշել հայրենի «Շիրազ» ֆուտպոլի խումբի Լիբանան հրաւիրուելը (1959), ինչպէս նաեւ Սովետ Միութեան ֆուտպոլի ախոյեան Հայաստանի «Արարատ»ի Պէյրութի մէջ ունեցած պատմական հիւրախաղերը, որոնց ներկայ եղան տասնեակ հազարաւոր մարզասէրներ:

Սարգիս Սարգիսեան մեծ ձեռնհասութեամբ ստանձնեց Հ.Մ.Մ.ի ֆուտպոլի առաջին դասակարգի խումբը, հանդիսանալով անոր հովանաւորն ու մղիչ ուժը: Իր նիւթաբարոյական աջակցութեան շնորհիւ եւ գործակցութեամբ Հ.Մ.Մ.ի վարչութեան ու անոր վաստակաշատ ատենապետ Տիգրան Սարաֆեանի, խումբը շարունակական յաջողութիւններ արձանագրելէ ետք, 1961-1962 խաղաշրջանին, Հ.Մ.Մ.ը հանդիսացաւ Լիբանանի ախոյեան եւ միշտ մնաց պատնէշի վրայ:



# URGENT APPEAL

## to help our communities in Lebanon



We stand in solidarity with our community in Beirut.

The consequences of the tragic explosion on August 4 are horrific. Nothing will bring back precious lives lost. Nor is it easy to restore homes, churches, community centers and businesses damaged. But we can lend a helping hand to our brothers and sisters at the AEBU - Lebanon who are doing the impossible to help the victims of the entire community following this disaster.

TOGETHER  
let's ease the pain and  
RESTORE HOPE!

TO DONATE VISIT  
[www.aebu.org/donate](http://www.aebu.org/donate)

# Իսրայելի Հացին Ինչ Քսուեցաւ

ՄԻՆԱՍ ԳՈՃԱԵԱՆ

Քիւրտական խօսքը մը կայ հայերու մասին. «Մարդ պէտք է հայուն վերջին խելքը ունենայ»: Որքան ճիշդ է եղեր: Սա փաստուեցաւ քանի մը ժամ առաջ, երբ Հայաստանի խօսնակը յայտարարեց թէ Թէլ Աւիվէն ետ կանչուած է Հայաստանի դեսպանը: Կանչուեր է որ ի՞նչ, որո՞ւն գարմացնելու համար եւ կամ որո՞ւն խօսք հասկցնելու համար: Հայաստանը քանի՞ գրող (սենթ, սանթիմ, դուրուշ, կոպեկ...) կ'արժէ Նաթանիաճուի համար...



զինական պաշարի կրկնապատկումը, որպէսզի այս վերջինս օգտագործուի Հայաստանի եւ Արցախի դէմ մեր մղած բուռն ու թէժ կռիւներուն...:

Դժբախտաբար թէ՛ հայրենիքի եւ թէ՛ արտաշխարհի մէջ կան հայեր, որոնք հրէական Հոլոքոսթի եւ հայկական Յեղասպանութեան միջեւ գտնուող ընդհանրութիւնները կը շփոթեն եւ մեր երկու ժողովուրդները ճակատագրակից նկատելով սովորական համակրանքէ անդին կ'անցնին: Մենք դէմ չենք հրեայ ժողովուրդին հարեւիք ունենալու արդար դարաւոր երազին իրականացման, բայց միաժամանակ դէմ չենք նաեւ դարերով հոն ապրած այլ բնիկ ազգերու գոյութեան: Յիշեցնեմ թէ Իսրայելի վարչախումբերը ընդհատակեայ զանազան միջոցներով այնքան բարեացակամ չեն գտնուած քրիստոնեայ եւ մահմեդական փոքրամասնութիւններու հետ եւ երբեմն բացառապէս ու երբեմն ալ ծածուկ միջոցներով զանազան խոչընդոտներ ստեղծած են այդ փոքրամասնութիւններու զարգացման դէմ: Այս իրականութիւնը լաւ կը գիտակցին նաեւ Իզրայէլի դեմոկրատական եւ առողջ ուժերը, որոնք դժգոհ են ներկայիս վարչապետի եւ իր քաղաքական շրջանակի ծայրայեղ ցեղապաշտական քաղաքականութենէն:

Պատերազմի այս մահու եւ կենաց օրերը կը յուսանք ուշքի կը բերեն մեր «տարօրինակ» պետութիւնն ու նոյնքան «տարօրինակ»

# Այս Նպատակի Անունը՝ Յաղթանակ Է

Ռ. ԿՈՐԻԻՆ

Այս նիւթի խորագիրը հայրենիքի վարչապետի հայրենասիրական էութիւնից բխած բոցաշունչ խօսքի մէկ հատուածն է, ընդգրկուն աշխարհահայութեան ուղղուած պաշտպանելու սրբազան հայրենիքը եւ անկոտորում կամքով առաջնորդուել միայն ու միայն յաղթանակի ոգով:

Այո՛, սպառնալից ժամանակներ ենք ապրում, կենաց եւ մահու կռիւներ են գնում Արցախում, թշնամիներ՝ ատրպէյճան եւ թուրքիա հայաստացութեան մոլուցքով իրենց զինուորական ուժերը միատեղած եւ վարձկան ահաբեկիչներով հակադաւալ ամենաարդիական զէնքերով յարձակում են գործել Արցախի ողջ սահմանային տարածքի վրայ մի նոր ցեղասպանութիւն կատարելու Արցախում եւ Հայաստանում:

Ինչ օրերում որ թուրքերը ցեղասպանութիւն էին գործում Արեւմտեան Հայաստանում, Շուշիում, Պաքում եւ Սոււֆայիթում, հայութեան հոգեվիճակը տարբեր էր՝ մտածում էին յոյսը դնելով ուսական իշխանութիւնների եւ եւրոպական պետութիւնների վրայ կարող են փրկուել, բայց երբեք այդ յոյսերը չիրականացան գոհ զնալով թուրք բարբարոսներին:

Մեր պատմութեան կեանքի ուղին ապացուցեց, որ ապրելու եւ գոյատևելու համար քո եւ քո ժողովրդի ուժին պիտի ապահինել, ոչ թէ աղերսանքով սրա եւ նրա հլու հպատակն ու կամակատարը դառնալ: Ստուգապէս ուժի հոգեբանութիւնը դարձաւ միակ զէնքը Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանի:

Խոր գիտակցութեամբ վարչապետը չզիմեց ՀԱՊԿԻՆ եւ ոչ էլ իր

դաշնակցին լաւապէս ըմբռնելով նրանց քաղաքականութիւնը... Հայ ժողովուրդը դաշնակցի կարիքն ունի փոխադարձ շահերի վրայ հիմնուած, հայ ժողովուրդը պատրաստ է պաշտպան կանգնել ուսա ժողովրդին, երբ վտանգի ենթարկուի թուրքիոյ կամ այլ ուժերի միջոցով, ինչպէս խորհրդային Հայաստանը երկրորդ համաշխարհային պատերազմում երեք հարիւր հազարով աւելի մարդու թով իր մասնակցութիւնը բերեց:

Հայաստանի ներկայ քաղաքականութեան որդեգրումով մեր յաջողութիւնների արդիւնքն պիտի ընդունել գուտ հայկական բանակի դիմադրողականութիւնը սանձարձակ պատերազմին ընդդէմ:

Անձնուրացաբար Արցախցին թուրքերի հակադաշնակ մարդու՝ թի եւ ամենակատարեալ սպառազէնի դէմ հերոսաբար պատմական յաղթական դրուագներ է կերտում:

Ողջ Հայութիւնը ուրախանում եւ գոտեպնդում է Արցախում կատարուած հրամանատարների, զինուորների եւ կամաւորների սխրանքների եւ քաջագործութիւնների համար եւ պատրաստուում է ամեն տեսակ գոհողութիւնների իր գորակցութիւնը բերելու, որպէսզի մարտնչողները նոյնպէս յուսաւառ թիկունքից շարունակեն իրենց Հայկ ու բէլի կռիւն մինչեւ յաղթանակ Արցախի որեւէ մի սանթիմետր հողային զիջումով:

Ինչպէս լրագրողներն ու հաղորդակցական միջոցներն են տեղեկացնում, ամենուրեք լաւում եւ տեսնում ենք, որ մեծ ու պզտիկ ասում են՝ Յաղթանակը մերն է:

Անկասկած յաղթութիւնը մերն է շարունակելով նոյն բարձր ոգեղիտութեամբ եւ միասնականութեամբ թէ՛ կռուի եւ թէ՛ դիւանագիտութեան դաշտում:

պրո-Իսրայէլ համակիրները: Կը չիշեցնենք թէ՛ որքան զինամթերք կորսնցնէ Ազպէյճանը այնքան ներքին գոհունակութիւն պիտի պատճառէ Իսրայէլին եւ զէնք ծախող

այլ «բարեկամ» թէ՛ թշնամի պետութիւններու, որոնք նոր քանակի զէնքեր պիտի խցկեն Ազրպէյճանի կոկորդէններս: Ողջ ըլլան քարիւղատոլարները (petrodollars):

### Յանուն Արցախի Համազգային Աղօթք Սուրբ Գայանեի Վանքում



Հոկտեմբերի 3-ին Սուրբ Գայանե վանքում, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարուեց զօրակցութեան աղօթքի արարողութիւն յանուն Արցախի եւ հայրենեաց պաշտպանների:

Արարողութեան ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր պատգամը յղեց համայն ժողովրդին: «Եւ ա՛յս է այն յաղթութիւնը, որ յաղթում է աշխարհին՝ մեր հաւատը» (Ա Յովհ. է 4):

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, Այսօր մեր եկեղեցիների նուիրական կամարների ներքոյ, մեր տներում, աշխատանքի վայրերում ի սփիւռս աշխարհի, միասիրտ ու միահոգի՝ զօրակցութեան մեր աղօթքն ենք բարձրացնում առ Աստուած Արցախ աշխարհի խաղաղութեան, մեր քաջարի զօրաց եւ զօրականաց յաղթութեան եւ մեր ժողովրդի անվտանգ ու ապահով կեանքի համար:

Հայրենիքի խաղաղութիւնը, ազգի ազատ ու անկախ կեանքի պաշտպանութիւնը ամէն մի հալի սրբազան առաքելութիւնն է: Այս առաքելութեանն ենք լծուած բոլորս մեր կեանքով ու ծառայութեամբ, մեր սրբազան հայրենիքի պաշտպանութեան յանձնառութեամբ ու նախանձախնդրութեամբ: Մենք խաղաղասէր ժողովուրդ ենք, բայց այժմ գտնուում ենք մի իրավիճակում, երբ խաղաղութիւն ունենալու համար պիտի պայքարենք: Մեր ժողովրդի ու հայրենիքի համար վճռական այս օրերին մենք հաստատակամ ու աներեր ենք՝ մեր հերոս նախնիների նոյն նուիրումով, քաջութեամբ եւ ողու արիւթեամբ պաշտպանելու հայրենիքը եւ ազատ ու անկախ կեանքի իրաւունքը: Ոչ մի ուժ չի կարող սասանել մեր ժողովրդի ազատ ապրելու կամքը, որը զօրացնում է ազատութեան համար մարտնչող հերոս մեր զաւակների բազուկները եւ ամրացնում նրանց հոգին: Հայոց բանակի արիասիրտ մարտիկները, Արցախ մեկնած բազում կամաւորներ այս պահին էլ դիմակայում են թուրքիայի հետ համատեղ իրականացուող Ատրըպեճանի յարձակումներին եւ թէ՛ մարտերում եւ մղում հակառակորդին:

Սիրելիներ, յաղթանակը որոշուած է ողու ամրութեամբ ու արիւթեամբ եւ անպարտելի հաւատքով, որով միշտ զօրեղ է եղել մեր ժողովուրդը՝ օրհասական պահերին իր ազատամարտերը պսակելով փառաւոր յաղթութեամբ: Մեր միաբանութեամբ, անպարտելի ողով ու հաւատով պիտի յաղթա-

հարենք փորձութիւններն ու նեղութիւնները, եւ Աստուծոյ օրհնութեամբ ազգս հայոց պիտի շարունակի զօրացնել իր պետականութիւնը, բազմապատկել խաղաղ կեանքի ձեռքբերումները, որոնցով անկախութեան այս տարիներին շէնացել է Հայաստան եւ Արցախ մեր հայրենիքը: Ոգու ուժ եւ եռանդ,

Շար.ը էջ 19


### Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ Սուրբ Սինոտը Իր Զօրակցութիւնը Յայտնած է Հայ Եկեղեցւոյ ու Հայ Ժողովուրդին

Արցախի Հանրապետութեան դէմ սանձազերծուած ռազմական գործողութիւններուն եւ ստեղծած իրավիճակին աւիրթով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը քոյր եկեղեցիներու հոգեւոր պետերէն, տարբեր երկիրներու կրօնապետերէն եւ միջեկեղեցական կազմակերպութիւններէն զօրակցական նամականեր եւ ուղերձներ կը ստացուն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղուած նամակին մէջ Աթէնքի Արքեպիսկոպոս, Սուրբ Սինոտի Նախագահ՝ Նորին Ամենապատուութիւն Հերոնիմոսը մասնաւորապէս նշած է. «Վեհափառ Տէր, սոյն թուականի 29 Սեպտեմբերին Յոյն Եկեղեցւոյ Սուրբ Սինոտը խոր ցաւով տեղեկացաւ Ձեր երկրին մէջ տեղի ունեցող ռազմական հակամար-

տութեան մասին: Մեր կարեկացանքն ու զօրակցութիւնը կը յայտնենք Ձեզի, Վեհափառ Տէր, եւ Հայաստանի տառապեալ բարեկամ ողջ ժողովուրդին այս սարսափելի, արիւնոտ փորձութեան համար: Մենք Ձեր հետ միասին կ'աղօթենք, կը կարեկցին եւ սրտցաւօրէն կը կիսենք ձեր վիշտը ու կը կանգնինք Ձերդ Սրբութեան ու հաւատաւոր հօտին կողքին, միախառնելու մեր աղօթքներն ու աղերսանքները? յաղթահարելու փորձութիւնը այս վճռական պահին:



# Ծննդեան 200-ամեակի Առիթով Նահապետը՝ Հայր Ղեւոնդ Ալիշան (1820-1901)

ՅՈՎՍԷՓ ՄԵԼՔՈՆԵԱՆ  
(Շարունակուած նախորդ թիւն)

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԻՉԸ

Ալիշանն իր ուժերը փորձած է նաեւ գեղարուեստական արձակի մէջ հրատարակելով «Յուշիկք հայրենեաց հայոց» պատմա-գեղարուեստական ստեղծագործութիւնը: Հայ ժողովուրդի հերոսական անցեալի օրինակով ան երիտասարդ սերունդին սորվեցուցած է սիրել հայրենիքը, չխնայել կեանքը անոր փրկութեան համար («Կարմիր վարդան»), զնահատել ու պահպանել ժողովուրդի մշակույթը («Արար Դպիր»):



առնուած ժողովրդական երգերը ի մի հաւաքելով է որ 1852 թուականին հրատարակած է հայերէն եւ անգլերէն, «Հայոց երգք ուսմականք» խորագրով երկը: Այդ ժողովածուն կը պարունակէր 19 զանազան երգեր, որոնց մէջ նաեւ հետագային համագրային հռչակ ստացած «Կոռնկ, ուստի՞ կուգաս» երգը:

## ԲԱՆԱՍԻՐԸ ԵՒ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Ալիշան 1872 թուականին սկսեալ իր կեանքն ու գիտական գործունէութիւնը կը նուիրէ Հայաստանի աշխարհագրութեան ուսումնասիրութեան:

Գիտական յօդուածներով Ալիշանը երեւան եկած էր «Բազմավէպ»-ի մէջ «Տեղագիր Հայոց Մեծաց» (1855) աշխատութեամբ:

Այդ աշխատութեան մէջ ան տեղագրած էր պատմական Հայաստանի գաւառները, տուած անոնց համապատասխան գիտա-աշխարհագրական բնութագրութիւնը: Ալիշանը նախատեսած էր գրի առնելու պատմական Հայաստանի բոլոր 15 նահանգներու մասին պատմա-աշխարհագրական բնութիւնը աշխատութիւններ, գանոնք ամփոփելով 20-22 մեծադիր հատորներու մէջ: Այդ շարքի առաջին գործն է «Շիրակ»-ը (1881), ուր Ալիշանը, բնաւ Հայաստանի չգտնուելով հանդերձ, քննութեան ենթարկած է այդ գաւառի պատմութիւն ու աշխարհագրութիւնը: Այնուհետեւ իրարու յաջորդած են «Սիսուանը» (1885), «Այրարատ» (1890), եւ «Սիսական» (1893) աշխատութիւնները: Այդ գործերուն մէջ Ալիշանը մասնագիտական մասնակրկիր քննութեամբ տեղագրած է Հայաստանի պատմական նահանգներու լեւները, լիճերը, ձորերը, արժէքաւոր տեղեկութիւններ հաղորդելով քաղաքներու եւ գիւղերու մէջ եղած մեծ ու փոքր պատմական յուշարձաններու եւ հայկական վանքերու մասին: Ան հրատարակելով իր պատմա-աշխարհագրական, հայագիտական եւ բանասիրական գիտութիւնները, հայ ժողովուրդը կը ծանօթացնէր իր հարուստ, պատմական անցեալին, հռչակաւոր ու անուանի նախնիներուն եւ անոնց կատարած մեծագործութիւններուն: Այդ աշխատութիւնները գիտական աշխատութիւններ չեն միայն, այլ յագեցած են նաեւ գեղարուեստական մտածողութեամբ:

Կ'արժէ հոս յիշել որ «Սիսուան»-ի եւ Ալիշանի հետագայ աշխատանքներու մոտաքր արգիլուեցաւ Օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ, այն պատճառա-

բանութեամբ որ անոնց բովանդակութիւնը «կը պղտորէր օսմանահայատակ ժողովուրդներու միտքը»:

Ալիշան հետեւած է ժամանակին լայն տարածում ստացած «աշխարհագրական եւ ուղղութիւն» տեսութեան, որու համաձայն մարդկային հասարակութեան զարգացման հիմնական ազդակը աշխարհագրական միջավայրն է, եւ այդ միջավայրով է որ կը պայմանաւորուին երկիրներու ու ժողովուրդներու միջեւ եղած տարբերութիւնները: 1881 թուականին վենետիկ կայացած աշխարհագրագետներու համաշխարհային երրորդ համագումարին Ալիշան կարգացած է «Հայկական աշխարհագրութիւն» նիւթով զեկուցում մը ուր Հայաստանի աշխարհագրութեան հետ առնչուող հարցերու կողքին, պաշտպանած է իր այդ տեսութիւնը:

Ուշագրաւ է մանաւանդ Ղեւոնդ Ալիշանի «Հայքուսակ կամ հայկական բուսաբանութիւն» (1895) աշխատութիւնը, ուր ան հաւաքած, դասաւորած եւ գիտականօրէն բնութագրած է հայկական բնաշխարհի աւելի քան 3400 բոյսերու եւ ծաղիկներու տեսակներ: Իր գրական գործունէութեան 50-ամեակի առիթով Տրապիզոնի երիտասարդութիւնը յուզիչ նախաձեռնութեամբ մը իրենց հայրենի գաւառներու եւ գիւղերու հազուագիւտ ծաղիկներու հաւաքածոյ մը ղրկած են իրեն, հայ ժողովուրդի երախտագիտութեան իբրեւ նշան: Նոյնքան ուշագրաւ է Ալիշանի «Հին Հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց»-ը (1895) ուր քննութեան առարկայ եղած են հայ հեթանոսութեան ծագումնաբանութիւնը:

Իր գիտական հսկայական ժառանգութեամբ (աւելի քան 45 հատոր), Ալիշան մեծապէս նպաստած է հայրենական գիտութեան զարգացումին: Անոր գործերէն շատերը այսօր ալ ունին սկզբնաղբիւրի (Primary Source) նշանակութիւն եւ արժէք:

Ալիշանի անտիպ ձեռագիրներուն, մէջ կը պահուած են նաեւ Արցախին եւ արեւելեան քանի մը նահանգներուն եւ շրջաններուն նուիրուած, աշխատանքներ: 1988 թուականին, Արցախեան շարժման օրերուն «Բազմավէպ»-ի թիւերուն մէջ նախ տպագրուեցաւ «Արցախ»-ը, ապա միւս գործերը, ցոյց տալով Ալիշանի գործերուն պատմական արդիականութիւնը:

«Թէեւ Նահապետը ֆիզիքապէս հեռու էր հայկական իրականութիւնից, այստեղից բխող բոլոր հետեւանքներով ապա դրա փոխառէն նա ունէր մի ուրիշ առաւելութիւն որից գուրկ էին ուրիշները: Դա այն էր որ իր ամբողջ կեանքն անց էր կացրել վենետիկի համբաւաւոր Միխիթարեան Միաբանութեան ներսում, մեծանուն հայագետների, նշանաւոր բանասէր-գիտնականների, հայ ժողովուրդի հոգեւոր հարստութեանը ձեւ ու կերպարանք տուող մեծութիւնների շրջանում» կը գրէ Սուրէն Շտիկեան իր «Ալիշանը Հայ Մտաւորականների Յուշերում Մենագրութեան մէջ»:

Իր կարգին Դամիէլ Վարուժան այսպէս արտայայտուած է Ղեւոնդ Ալիշանի մասին: «Ան բանաստեղծ էր, որ գիտութիւն կեւր-

նէր, ու գիտնական մըն էր որ բանաստեղծութիւն կ'ընէր, ոչ թէ միայն ճշմարտութիւն մը քողագերծելու միակ մտահոգութեամբ, այլ նաեւ ա'զգ մը երեւան բերելու համար լոյս աշխարհքին»:

Արդարեւ, հայագիտական իր աշխատութիւններով «բանասէր» Ալիշանը երբեմն կը դառնար «վիպասան ու բանաստեղծ»: Այս մասին արտայայտուելով Ալիշանը ըսած է: «Ո՛հ, երբ այսպիսի յիշատակաց վրայ շարժի գրիչն չի կրնար գոնէ կայծեր չցատքեցնել. պատմիչն յանկարծ վիպասան կըլլայ, բանագետն՝ ալ բանաստեղծ...»:

## ՀՐԱՏԱՐԱԿԻՉԸ

Ալիշանը կարեւոր ներդրում ունի նաեւ շարք մը հայ պատմիչներու գործերու գիտական հրատարակութեան բնագաւառին մէջ: Անոնցմէ են՝ Կիրակոս Գանձակեցիի «Համառօտ պատմութիւն» (1865), Լաբուբեան ասորի մատենագիր «Թուղթ Աբգարու...», Խոսրով Անձեւացիի «Մեկնութիւն աղօթից պատարագին» (1869), «Կամենից, Տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումելիոյ» (1896) երկերը, «Սոփերք հայկականք» մատենաշարի 22 հատորիկները (1853-1861):

\*\*\*\*\*

Ալիշան իր հայագիտական աշխատանքով ոչ միայն գրաւած է հայ ժողովուրդի ուշադրութիւնը այլեւ իր վրայ հրաւիրած է օտար գիտական շրջանակներու ուշադրութիւնը: 1874 թուականին կ'ընտրուի վենետիկի Արքուէի Ուսումնական Գիտութիւններու Կաճառի անդամ: 1886-ին կը դառնայ Ֆրանսական ակադեմիայի Պատույ լէգեոնի դափնեկիր: Յաջորդ տարին Իտալիոյ Ասիական Ընկերութեան Պատուոյ Անդամ կը հռչակուի: 1894 թուականին Մոսկուայի Հնաբանական Ընկերութիւնը ակադեմիական կը կարգէ գինք եւ 1896-ին կը դառնայ վենետիկեան Կաճառի եւ Ս. Պետրոսպոլի Հնախօսական Ընկերութեան անդամ, իսկ 1897 կ'ընտրուի Ենայի փիլիսոփայական ակադեմիայի պատուաւոր անդամ եւ դոկտոր:

Իր տարած գիտական այս աշխատանքներու բնական հետեւանքը այն եղաւ որ 1860-1870 թուականներուն Ալիշան հայագիտական ասպարէզի մէջ կը դառնար համա-եւրոպական հեղինակութիւն: «Նրանից խորհուրդ էին հարցնում եւ նրան ունկնդրում էին այնպիսի ճանաչուած հեղինակութիւններ ինչպիսին էին Տիւրկոյի, Լանկլու, Հէնրիխ Գեյցեր, Նիկոլայ Մաուր եւ շատ ուրիշներ» կը նշէ Սուրէն Շտիկեան: «Այս անունները թուումը «արդէն ակնբախօրէն ցոյց կու տայ թէ որպէս հայագէտ-գիտնական ինչպիսի մեծութեան էր հասել Նահապետը: Արժէքաւոր գործ կատարելով հանդերձ, իր ժամանակակից Միխիթարեան հայրերէն ոչ մէկը կարողացաւ բարձրանալ համագրային մեծութեան այն մակարդակին, որին իր գործունէութեամբ կարողացել էր հասնել Ալիշանը: Այս պատճառով Նահապետը պաշտամունքի առարկայ դարձաւ հայ ժողովուրդին համար, դարձաւ գիտութեան եւ գրականութեան ասպարէզի մէջ իւրատեսակ չափանիշ» կ'աւելցնէ հայրենի գրականագէտ Սուրէն Շտիկեան:

Ալիշան մահացած է 9 Նոյեմբեր 1901 թուականին եւ թաղուած



# Նահապետը՝ Հայր Ղեւոնդ Ալիշան

Շարունակուած էջ 16-էն

է հայրենիքէն հեռու՝ Վենետիկի կողմին մէջ, ու կը ննջէ իր համբաւաւոր Մխիթարեան հայրերու կողքին:

\*\*\*\*\*

Ալիշանի ծննդեան 200-ամեակի յիշատակի ոգեկոչական հանդիսութիւններ եղան Հայրենիքի եւ Սփիւռքի մէջ: 6 Յուլիս 2020 թուականին Երեւանի մէջ տեղի ունեցաւ եռօրեայ առցանց գիտատաասնելով մը նուիրուած Հայր Ղեւոնդ Ալիշանի ծննդեան 200-ամեակին կազմակերպութեամբ «Մեսրոպ Մաշտոց» մատենադարանի: Գիտատաասնելովի բացման խօսքը արտասանելով Հայաստանի Հանրապետութեան Ազգային Գիտական եւ Ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսեան ըսած է: «Արժեւորել Ղեւոնդ Ալիշանի յիշատակը կը նշանակէ յետադարձ հայեացք նետել մեր ժողովուրդի անցած պատմական ուղիին, ստեղծած մշակութային անանց արժէքներուն եւ գրականութեան վրայ, ու նաեւ այդ ամէնի ուսումնասիրման գործում արժեւորել Մխիթարեան միաբանութեան դերը, որովհետեւ ինչպես իրաւացիօրէն նշուել է տարբեր հետազոտողների կողմից, Ալիշանը դարձաւ Մխիթարեան հայագիտութեան եւ Մխիթարեանների ստեղծած ողջ գրականութեան հանրագումարը»:

«Ղեւոնդ Ալիշանը դարուս հայկական հանճարի ներկայացուցիչն է: Իբրեւ բանաստեղծ բոլոր բանաստեղծների նահապետն է, իբրեւ եկեղեցական մի Շնորհալի իբրեւ գիտնական մի հանրագետ է» գրած է Ղազարոս Աղայեան: «Տարագ» պարբերականին մէջ Նահապետի գրական գործունէութեան 50-ամեակին առիթով 1870 թուականին: Իր կարգին Շիրվանզատէ «Արձագանգ» պարբերութիւնին մէջ անդրադառնալով Ալիշանի գործին կը հաստատէր: «Ղեւոնդ Ալիշանը մեր ազգի ամէնէն մեծ գրագետն է այժմ, նա հայկական գիտութեան միակ հեղինակութիւնն է 19-րդ դարում, նա է մեր նորագոյն բանաստեղծութեան հայրը, եւ վերջապէս նորա է պատկանում հայկական երկրորդ քերթողահայր լինելու պատուանունը:» Իսկ Արշակ Չոպանեան Փարիզի «Անահիտ» հայագիտական հանդէսին մէջ կ'ըսէր: «Այն գործը, զոր կը թողու Ալիշան, հսկայ յիշատակարան մըն է անխոնջ աշխատասիրութեան, մշտավառ ու բեղմնաւոր հետաքրքրութեան, կաթոզին ու խանդոտ զգայնութեան, գոլոր ու թեւաւոր երեւակայութեան - գործ հայրենասէրի, կրօնաւորի, հմուտի, ընդհանրացուցիչի, թարգմանիչի»:

Դանիէլ Վարուժան լաւագոյնս արտայայտած է Ալիշանի անձին, գործին եւ աւանդին ամբողջական պատկերը երբ ըսած է:

«Ալիշանի Ոգիին մէջ է այն ներուժ կեանքը, որ սքեմը գլխուն քաշած, աղօթքի մրմունջը շրթունքներուն՝ թափառեցաւ տարիներով Աւարայրի դաշտին՝ մինչեւ Արարատի քղանքները, Սիսուանէն Շիրակ, անընդհատ խառնելով նախնեաց ածիւնները, անոնց մտքին մոխրաթաղ կայծերը: Ժողուեց, սրտին վրայ հաւաքեց մազադաթներն, յիշատակարաններն ու արձանագրութիւնները: Աչքերուն բոլոր լոյսն ու երիտասարդ կեանքին ծաղիկները թափթփեց անոնց վրայ՝

մինչեւ որ մէջտեղ բերաւ հին փառայեղ կեանքի մը, ազգի մը անցեալ փառքը: Ու ամէն մէկ յիշատակարանի, ամէն մէկ աւանդութեան հաւատաց ան սուրբի մը հաւատքով, փոխանակ գիտունի մը թերահաւատութեամբ. բաւական էր, որ բոլոր այդ բաները ըլլային գեղեցիկ ու բունկցնէին հրդեհը հայրենասիրութեան»:

\*\*\*\*\*

Մեզմէ ոմանք, չըսելու համար շատեր, Հայաստանէն ներս թէ դուրս, մտահոգ են սփիւռքահայութեան վերապահուած ճակատագրով: Սփիւռքի տարտղնուածութիւնը հայ մշակոյթի զարգացման առջեւ հիմնական հարցեր յառաջացուցած է եւ կը յառաջացնէ տակաւին: Երբ ճառեր կը խօսուին բեմերէն, ու քարոզներ կը լսուին խորաններէն թէ կարելոք է հայ մշակոյթը, գիրն ու գրականութիւնը պահպանել սփիւռքի մէջ հարց կը ծագի ո՞ր մէկ մշակոյթի մասին կը խօսուի, ո՞ր մէկ ժառանգութեան գովաբանութիւնը կ'ըլլայ: Ո՞վ կրնայ յստակ կերպով կրնայ ըսել եւ բացատրել թէ ի՞նչպիսին է նոր հայը եւ հայ մշակոյթը Ամերիկայի մէջ, Եւրոպայի մէջ, Միջին Արեւելքի մէջ, Լատինական Ամերիկայի մէջ եւ կամ Աւստրալիոյ մէջ: Ինչ՞ ձեւով պիտի բացատրենք այդ մշակոյթը, եւ ի՞նչ ձեւով պիտի փոխանցենք անոր էութիւնը սփիւռքի մէջ մեծացած երիտասարդ հայ սերունդին որ առիթը չէ ունեցած զարգացնելու իր ազգային գրականութեան եւ մշակոյթի գիտութիւնը եւ անկէ բխող գիտացութիւնը այս նոր պայմաններուն մէջ: Ի՞նչն է որ հայ կ'ընէ գիրք եւ հայ կը պահէ իր ծննդավայր շրջապատին մէջ որ այնքան տարբեր է մեր ճանչցած կամ երեւակայած շրջապատէն եւ իրականութենէն: Ինք իր ծննդավայր երկրի քաղաքացին է ու հայ միաժամանակ եւ իբրեւ այդպիսին երկուութիւն մը կ'ապրի: Անոնցմէ ո՞ր մէկը գերակայ է իր ամենօրեայ կեանքին մէջ:

Մեր ժողովուրդի կեանքին մէջ երկու առիթներով գիրքը, գրականութիւնը եւ մշակոյթը փրկարար դեր խաղցած են մեր ժողովուրդի ազգային ինքնորոշ քաղաքակրթութեան զարգացումին մէջ՝ միաժամանակ ապահովելով մեր ժողովուրդի փրկութիւնն ու յաւերժութիւնը: Առաջինը կը պատկանի մեր Ոսկեդարու շրջանին երբ Մեսրոպ Մաշտոց եւ իր աշակերտները գիտակցելով գիրի եւ գրականութեան հզոր ազդեցութեան հրաշքի համազոր արարքով մը հայկական նոր մշակոյթ մը ստեղծեցին այնպիսի ատեն երբ հայութիւնը կախեալ էր օտարամուտ ազդեցութիւններէ եւ ենթակայ անոնց մտաւորական եւ կրթական ուղղութեան: Անոր նման երկրորդ հրաշք մըն ալ պատահեցաւ երբ 1717 թուականին Մխիթար Աբբահայր հիմնեց միաբանութիւն մը որ Եւրոպայի սրտէն գիրքի, գրականութեան եւ մշակոյթի ճամբով զարթոնք մը բերաւ հայ ժողովուրդին, ամբապնդեց մեր ազգային գոյութեան եւ գիտակցութեան հիմքերը: Երկու պարագաներուն ալ ազգային ինքնագիտակցութեան եւ արժէքներու հասկացողութիւնը անցաւ գիրի, գրականութեան եւ մշակոյթի ճամբով՝ հարստացնելով ապագայ սերունդները եւ անոնց փոխանցելով մեր արժէքներու հասկացողութիւնը եւ ըմբռնումը: Արդեօ՞ք ներկայ սփիւռքը ի վիճակի է



նոյնը կրկնելու այսօր կամ ապագային:

Մեր եզակի բանաստեղծներէն Դանիէլ Վարուժան 1902 թուականին Հայր Ղեւոնդ Ալիշանի մահուան առիթով Պոլսոյ մէջ կազմակերպուած յիշատակի հանդիսութեան մը ընթացքին ըսած է:

«Միութիւններ, միաբանութիւններ, կուսակցութիւններ եւ նոյնիսկ ազգեր ունին իրենց ուրոյն կեանքը, աւանդութիւնները եւ սկզբունքները, որոնց համեմատ կը ճշտուի իրենց ուղղութիւնը եւ ծնունդ կ'առնէ իրենց գործը, բո՛ւն նպատակը: Այս իրենց կենսունակութիւնն է: Բայց որպէսզի անոնց միութիւնը տեւական դառնայ եւ շօշափական ամբողջութիւն մը ստանայ անոնց կեանքը պէտք ունին Հոգիի մը, Տաղանդի մը, որ իրենց պատկանած իմբակցութեան ամբողջ իտէալները իր անձին մէջ խտացնէ եւ մարմնացումն ըլլայ այդ բոլորին: Անգամ մը որ իմբակցութիւն մը կրցաւ ծնանիլ այդ Մարդը՝ այլեւս փրկուած կրնայ համարիլ իր գոյութիւնը եւ տեւականութիւնը: Տարիներ ու դարեր այդ Մարդուն շուրջ կը հաւաքուին բոլոր հետեւորդ ուժերը, բոլոր հոգիները ու անոր յիշատակէն կը քաղեն իրենց առաքինութիւնը»:

Հայր Ղեւոնդ Ալիշան այդ «Հոգին», այդ «Տաղանդը» եղաւ իր ժամանակին: Իսկ ո՞վ կամ ո՞վքեր պիտի ըլլան մեր ժամանակներու նոր տիպարները, եւ սփիւռքի փրկարարները:

\*\*\*\*\*

- Աղբիւրներ
ԵԱՐՏՏԵԱՆ, ՏԱՃԱՏ Հ.: »Մխիթարեաններու Նպաստը Հայ Մշակոյթին եւ Հայագիտութեան«, Լոս Անճելըս, 1987:
ԵՐԱՄԵԱՆ, ՍՈՒՐԵՆ Հ.: »Կենսագրութիւն Հայր Ղեւոնդ Ալիշանի«, Վենետիկ, 1903:
ԹԵՕԼԵՕԼԵԱՆ, ՄԻՆԱՍ : »Դար մը Գրականութիւն«, Պոսթըմ, 1977:
ՊԶՏԻԿԵԱՆ, ՅԱՐՈՒԹԻՒՆ, Հ.: »Մխիթար Վոյ. Սերաստացի եւ Մխիթարեաններու Նպաստը Հայ Մշակոյթին«, Երեւան 2003:
Առաւել:
-Առցանց յօդուածներ, յուշագրութիւններ եւ գրութիւններ:
-Հայաստանի Ամերիկեան Համալսարանի Հայ Մատենագրութեան Թուանշային Առցանց Գրադարան:
-Հայաստանի Սովետական Հանրագիտարան, Երեւան 1976:
Dedeyan Gerard, Histoire du Peuple Armenien, Editions Privat, Toulouse, 2007.

## Հ.Ա.Ս.ի Նուիրեալ Բարերարը



Սարգիս Սարգիսեան Լոս Անճելըս այցելութեան ընթացքին՝ վերերան ՀՄՍ-ականներու հետ

Շարունակուած էջ 13-էն

մեծարուեցաւ իր միջավայրէն: Զանազան առիթներով պարզեւտրուեցաւ եւ յարգուեցաւ մետալներով եւ պատուոյ գիրերով. քանի որ մշակը արժանի էր նման վարձատրութիւններու: Այդ բոլորի դափնեպսակը հանդիսացաւ իր 90 ամե-

եակին նուիրուած մեծարանքի հանդիսութիւնը: Իր մահով մեր մարդիկները կորսնցուցին գորովագութ հայր մը, որ շիջեցաւ մոմի մը նման, լուսաւորելով իր մերձակայքը: Մշտնջենական լոյս յաւերժի գերազանց ճամբորդին: Գ. ՄՈՒՈՅԵԱՆ

### «Ասթոն Վիլա» - «Լիվերպոլ»՝ 7:2



Անգլիոյ առաջնութեան չորրորդ օրուայ մրցումներուն ընթացքին ախոյեան «Լիվերպոլ» հիւրընկալուեցաւ «Ասթոն Վիլայէն» եւ պարտութիւն կրեց 2:7 հաշուով:

«Ասթոն Վիլան» 3 խաղէն յետոյ 9 միաւորով երկրորդ տեղը կը գրաւէ: 9-ական միաւոր ունին նաեւ 4-ական հանդիպում անցկացրած եւ յաջորդ տեղերը գտնուող «Լեսթեր Սիթին», «Արսենալն» ու «Լիվերպոլը»: Առաջատարը «Էվերտոնն» է՝ 12 միաւորով:

57 տարուայ ընթացքին այս արդիւնքը «Լիվերպոլի» ամենէն ծանր պարտութիւնն էր:

### «Մանչեսթեր Եունայթետ» - «Թոթենհամ»՝ 1:6

Անգլիայի առաջնութեան չորրորդ օրուայ մրցումներուն գծով «Մանչեսթեր Եունայթետ» իր դաշտին վրայ 1:6 արդիւնքով պարտուեցաւ Լոնտոնի «Թոթենհամէն»:



Դաշտի տէրերը 28-րդ րոպէն անդին հանդէս եկաւ 10 ֆուլ-պոսթսներով: Կարմիր քարտ ստացաւ ֆրանսացի յարձակող Անտոնի Մարշիլը, որ ձեռքով թեթեւ հարուածեց ետք էրիկ Լամելայի դէմքին:

«Թոթենհամ» 7 միաւորով 5-րդ տեղը կը գրաւէ: «Մանչեսթեր Եունայթետը» 3 խաղէն յետոյ 3 միաւորով 16-րդ դիրքի վրայ է:

### «Պարսելոնան» Ու «Սելիլիան» Յաղթողին Չպարզեցին

Սպանիոյ առաջնութեան փոխ-ախոյեան «Պարսելոնան» սեփական խաղադաշտին վրայ հանդիպեցաւ «Սելիլիայի» հետ: Արձանագրուեցաւ 1:1 հաւասար արդիւնք:

8-րդ վայրկեանին հաշիւը բացին հիւրերը: Աչքի ինկաւ հոլանտացի յարձակող Լիւկ դէ Յոնգը: 2 վայրկեան ետք քաթալոնական խումբի պրագիլացի կիսապաշտպան Ֆիլիպէ Կոստինիոն վերականգնեց հաւասարութիւնը:

«Պարսելոնան» ու «Սելիլիան» ունեցած են 3-ական հանդիպում եւ 7-ական միաւորով 5-6-րդ տեղերը կը գրաւեն:

### «Լեւանտ» - «Ռէալ»՝ 0:2

Սպանիոյ առաջնութեան 5-րդ օրուայ մրցումներուն գծով ախոյեան «Ռէալը» մրցակիցի խաղադաշտին վրայ հանդիպեցաւ «Լեւանտէի» հետ: Ֆրանսացի Ջիւնեդին Ջիդանի գլխավորած խումբը յաղթեց 2:0 հաշուով: Աչքի ինկան յարձակողներ՝ պրագիլացի Վինիսիոս Ժոնիորն ու ֆրանսացի Քարիմ Բենզեման:



«Ռէալ» 4 խաղէն յետոյ 10 միաւորով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը: Երկրորդ դիրքի վրայ գտնուող «Պետիս» 5 խաղերու ընթացքին վաստակած է 9 միաւոր:

### «Պայրըն Միւնիխի» Պարտութիւնը

Գերմանիոյ ֆուլթպոլի Յախոյեանութեան 2-րդ հանգրուանին ամենահետաքրքրական մրցումին, 7-րդ դիրքը գրաւող «Հոֆենհայմը» իր դաշտին վրայ յաղթեց առաջին դիրքի վրայ ընթացող «Պայրըն Միւնիխին»:

Այս արդիւնքին ետք «Պայրըն» 6 կէտով իշաւ 4-րդ տեղը, իսկ «Հոֆենհայմ» կոլերու տարբերութեամբ կը գրաւէ 6-րդ դիրքը: Աղիւսակը կը գլխավորէ Լայպցիկի խումբը:

### Թեժ Մարտերու Ընթացքին Ձոհուած է Հայաստանի Ախոյեանութիւն Շահած Թաթուլ Յարութիւնեանը



«Ցաւով կը տեղեկացնենք, որ Արցախեան թէժ մարտերու ընթացքին զոհուած է Հայաստանի ուժային եւ օդային հաւաքականի անդամ, Հայաստանի բազմակի ախոյեան եւ պարգապէս լաւ ընկեր Թաթուլ Յարութիւնեանը:

Ֆեդերացիայի անունով խորին ցաւակցութիւն կը յայտնենք ընտանիքին եւ հարազատներուն:

Հանգչիր խաղաղութեամբ, հերոս», - նշուած է ֆեդերացիայի հաղորդագրութեան մէջ:

### Վահան Պիչախչեան. Յատուկ Կոլ Իմ Հայրենիքի Համար

Հայաստանի հաւաքականի եւ «Ժիլինայի» կիսապաշտպան Վահան Պիչախչեանը Սլովակիայի առաջնութեան ընթացքին իր նշանակած կողմը նուիրած է հայ գինուորին: Անոր շապիկին վրայ եղած է «Աստուած պահանի հայ գինուորին» գրութիւնը: Վահան Պիչախչեանը լուսանկարը հրատարակած է Ֆէյսպուքի վրայ՝ գրառելով. «Յատուկ կոլ իմ հայրենիքի համար: Ես հպարտ եմ, որ հայ եմ: Ես միշտ քո հետ եմ Հայաստան Աշխարհ»:



Special one for my country. I am proud to be Armenian I am with you Հայաստան Աշխարհ յատուկ կոլ իմ հայրենիքի համար: Ես հպարտ եմ, որ հայ եմ Ես միշտ քո հետ եմ Հայաստան Աշխարհ

Սլովակիայի առաջնութեան 9-րդ շրջանին «Ժիլինայի» իր դաշտին վրայ խաղաց «Դունայսկա Ստրեդայի» հետ եւ յաղթանակ տարաւ 4:1 արդիւնքով:

Դաշտի տէրերու երրորդ կողմը նշանակեց Վահան Պիչախչեանը: Ան ընթացիկ առաջնութեան ընթացքին նշանակեց իր 5-րդ կոլը: «Ժիլինային» 13 միաւորով չորրորդ տեղը կը գրաւէ:

### «Ռոման» Մխիթարեանի Հետ Յաղթեց

Ֆուլթպոլի Իտալիոյ առաջնութեան երրորդ շրջանին «Ռոման» «Ուդինեզէի» դաշտին վրայ առաւելութեան հասաւ նուազագոյն հաշուով:



Միակ կողմը 55-րդ վայրկեանին հեռուէն կատարած հարուածով արձանագրեց սպանացի յարձակող Պեդրո Ռոտրիկեսը:

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեան «Ռոմայի» մեկնարկային կազմին մէջ էր եւ փոխարինուեցաւ 71-րդ վայրկեանին:

«Ռոման» 3 խաղէն յետոյ 4 միաւորով 8-րդ տեղը կը գրաւէ: «Ուդինեզէն» 3 պարտութեանէն յետոյ առանց միաւորի նախավերջինն է:

### Մբապէն Դարձաւ ՊՍԺ-ի Պատմութեան 6-րդ Լաւագոյն Ռմբարկուն

Ֆրանսական ՊՍԺ-ի եւ Ֆրանսայի ազգային հաւաքականի յարձակող Կիլիան Մբապէ Լիգա 1-ի 6-րդ օրուայ մրցումներուն՝ «Անժէի» դէմ խաղի ընթացքին նուաճման հեղինակ դարձած է:

21-ամեայ Մբապէն «Անժէի» դէմ խաղի ընթացքին արձանագրած է իր 66-րդ կոլը ՊՍԺ-ի կազմէն ներս՝ դառնալով ակումբի պատմութեան 6-րդ լաւագոյն ռմբարկուն:

ՊՍԺ-ի պատմութեան լաւագոյն ռմբարկուն ուրուգիուացի յարձակող Էդինսոն Կաւանին է՝ 138 կոլով:

Յիշեցնենք, որ ՊՍԺ-ն յաղթանակ տարած է «Անժէի» նկատմամբ 6:1 հաշուով:

### Մահացած է Գրող, Հրապարակագիր, Խմբագիր Արամ Մեփեթեան

Լիբանանահայ անուանի արձակագիր, հրապարակագիր, խմբագիր, հայ մշակույթի նուիրեալ եւ հասարակական գործիչ Արամ Մեփեթեան ոչ եւս է: Ան անդամ էր Հայաստանի գրողներու եւ լրագրողներու միութեան, հայ մամուլի անխոնջ աշխատակից էր ու գլխաւոր խմբագիր՝ ՀԲԸՄ- ՀԵԸԻ «Խօսնակ» ամսագիրի: Ան 86 տարեկան էր: «Մասիս» շաբաթաթերթ խորագրաց վշտակցութիւններ կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն եւ մերձակորներուն, մասնաւորաբար իր գաւկիչն Հրաչ Սթեփեթեանին:



### Հ.Բ.Ը.Մ. Մէկ Միլիոն Տոլար Կը Նուիրէ

Շարունակուած էջ 1-էն

նախադրական գործողութիւններով: Որպէս նախնական խթան այս այժմէական նախաձեռնութեան, Հ.Բ.Ը.Միութիւնը արդէն մէկ միլիոն տոլար յատկացում մը տրամադրած է «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին: Այս քայլը գործողութեամբ է այն յանձնառութեամբ, որ Հ.Բ.Ը.Միութիւնը պիտի կատարէ նաեւ իր ստացած նուիրաբերումներուն համարժէք յատկացում, այդպիսով կրկնապատկելով կատարուած նուիրատուութիւնները, հինգ միլիոն տոլարի սահմաններուն մէջ, կախեալ՝ մինչեւ ծրագրին աւարտը արձանագրուած նուիրներու հանրագումարէն: Հ.Բ.Ը.Միութիւնը պատրաստակամ է կրկնապատկելու իւրաքանչիւր նուիրաբերուած տոլար՝ մինչեւ հինգ միլիոն տոլարի սահմանը: Այս կը վերաբերի մինչեւ հարիւր հազար տոլար արժողութեամբ որեւէ անհատական նուիրատուութեան: Սա յաւելեալ ազդակ պիտի ըլլայ բոլոր հայորդիներուն, որոնք նախանձախնդիր են, որ իրենց տրամադրած օժանդակութիւնը կրկնակիօրէն արդիւնաւոր ըլլայ՝ մարտադաշտին վրայ թէ անկէ դուրս կեանքեր փրկելու առումով: Պաշտպանական միջոցառումներու այս ճակատագրական հանգրուանին, վերոյիշեալ նախաձեռնութիւնը մեծապէս պիտի նպաստէ հանգանակութեան յաջողութեան, մինչ քաղաքացիական պարենաւորումի եւ մատակարարումներու հրատապութիւնը եւ վիրաւոր գիւնուորներու բուժման սարքերու կարիքները կ'աճին օրէցօր, ինչպէս դիտելու տայ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Գործադիր Տնօրէն Հայկակ Արշամեան: Ի սկզբանէ մէկ միլիոն տոլարի ներդրումը եւ զայն տասնապատկուած տեսնելու կարելիութիւնը իւրաքանչիւր հայորդիի համար ոգեւորութեան աղբիւր պիտի դառնան, զինք մղելով անյապաղ մաս-

նակցութեան: Հ.Բ.Ը.Մ.-ի Նախագահ Պերճ Սեդրակեան այս նախաձեռնութիւնը բնորոշեց որպէս անարարելի կանխատեսելի եզրայնագում: Նկատի ունենալով իրավիճակի ծանրութիւնը եւ դաժանութիւնը, թէ՛ թաքտոցներու մէջ գոյատեւող քաղաքացիներուն, թէ՛ բժշկական կարիքներ ունեցող գիւնուորականներուն սատար կանգնելու իմաստով՝ որեւէ կասկած չկայ այն մասին, թէ ինչ առաքելութեան կանչուած ենք այս մռայլ պահուն: Անյապաղ օժանդակութիւն ցուցաբերելու համար, քաջալերելի պիտի ըլլայ նուիրատուութիւնը կատարել առցանց: Հ.Բ.Ը.Միութիւնը ամբողջացած իւրաքանչիւր 500,000 գումարը անմիջականօրէն պիտի փոխանցէ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին: Կը խնդրուի նկատի ունենալ, որ նուիրատուութիւնները պէտք է կատարել ուղղակիօրէն Հ.Բ.Ը.Մ.-ի անունով: Մասնակցելու համար, այցելեցէ՛ք [www.agbu.org/aid4artsakh](http://www.agbu.org/aid4artsakh) կայքէջ, իսկ դրամատնային փոխանցումներու համար՝ [giving@agbu.org](mailto:giving@agbu.org): Յաւելեալ տեղեկութիւններու համար, դիմել [www.agbu.org/aid4artsakh](http://www.agbu.org/aid4artsakh) հասցէին: Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը (Հ.Բ.Ը.Մ.) աշխարհի մեծագոյն ոչ-շահամէտ հայկական կազմակերպութիւնն է, նուիրուած հայեցի ինքնութեան եւ ժառանգութեան պահպանումին եւ մշակումին՝ կրթական, մշակութային եւ մարդասիրական ծրագրերով: Միութեան գործունէութիւնները բարերար ազդեցութիւն կը բերեն տարեկան 500,000-է աւելի անձերու կեանքերէն ներս, Հայաստանի ու Արցախի մէջեւ Սփիւռքի տարածքին: Իր հիմնադրութեանէն ի վեր, Հ.Բ.Ը.Մ.ը հաւատարիմ մնացած է համայն հայութեան բարօրութեան ապահովումին ուղղուած իր գլխաւոր առաքելութեան:

### Իսրայէլը՝ Արցախում

Շարունակուած էջ 2-էն

յայտուած են հայերին սպանող զինքի մատակարարումը դադարեցնելու օգտին: ԱՄՆ եւ այլ խոշոր երկրներու զգալի ազդեցութիւն ունեցող հրեայ համայնքները եւ ազդեցիկ ֆինանսական հաստատութիւնները մեծ դեր ունեցան 1920-ին Հայաստանի նկատմամբ ԱՄՆ մանդատը թոյլ չտալու գործում: Հիմա, դատելով պատերազմի համար վճարուած նշանակութիւն ունեցող գիւնատեսակների եւ գինամթերքի զանգուածային մատակարարման շուրջ դիրքորոշումից, հրեայ պետութիւնը թիկունքից հուժկու հարուած է հասցնում հայութեանը: Մեր գոհերի եւ տեսնելիկայի կորուստները 70-80 տոկոսը հրեաների ձեռքով եւ մտքով պատրաստած, հրեաների վաճառած զէնքն ու գինամթերքն են: Հայկական ՀՕՊ միջոցները Արցախում ու ՀՀ տարածքում, հէնց Երեւանի մերձակայքում հետախուզող եւ ոչնչացնելու ունակ Խար անօդաչուները, հայկական զրահատեխնիկան իր անձնակազմերով ոչնչացնող Խար անօդաչուները, հայկական բնակչութիւնը եւ գինձառաջողներին ոչնչացնող մեծ տրամաշափի Lora բախտիկ հրթիռները, հայկական բնակչութիւնը եւ գինձառաջողներին ոչնչացնող Lat-160 կասետային ականներով համազարկային

կայանքները՝ իսրայէլական հրահանգիչներով եւ ՅԱՀԱԼ բանակի սպաներով ղեկավարուող հակայական գինանոցը Բաքուի տրամադրութեան տակ է: Զէնքն ու գինամթերքը այսօր էլ վրաստանի տարածքով մատակարարուած է Բաքուին: Թուրքական զէնքը եւ գինձառաջողները նոյնպէս վրաստանի աւտօճանապարհներով, երկաթգծով եւ օդային տարածքով հակայական ծաւալներով անցնում է Բաքու: Նշաններ կան, որ իր աշխարհագրական-քաղաքական շահերից ելնելով Իսրայէլը Կովկասում վարում է բարդ խաղ Թուրքիայ, Ռուսաստան, Իրան եւ անկիւնու գազաթնրի միջեւ: Կան նաեւ հիմքեր ենթադրելու, որ երկու վերջին պատերազմների գլխաւոր շահառուն հէնց Իսրայէլ պետութիւնն է, որ օգտագործում է վրաստանում եւ կասպիցի Արեւելքում առկայ բազմաքանակ հրեայ համայնքները: Մասնաւոր նիւթը՝ հայ ժողովուրդն է եւ Հայաստանի գոյութեան հիմքը: Թուրքիան՝ իր հակահայ զգալի մեծամասնութիւնը ներկայացնող էրդողանի կառավարութեամբ հիմնականում պարզ եւ ընթեռնելի է մեզ համար: Այսպէս կոչուած «ադրբեջանցիների» մասին խօսելն իսկ աւելորդ է: Իսկ հրեայ եւ վրացի ժողովուրդները՝ իրենց պետութիւններով հանդերձ: «ԵԶԵՐ»

### Յանուն Արցախի Համազգային Աղօթք

Շարունակուած էջ 15-էն

տոկունութիւն եւ յաղթանակներ մեզ եւ Արցախի բարեպաշտ մեր ողջ ժողովրդին: Մենք բոլորս քաջալեր ու գոտեպինդ ենք՝ տեսնելով այս օրերին Արցախից սփռուող արիւթեան ոգին, յաղթական ու անպարտելի հաւատքը պատերազմական իրավիճակի նեղութիւնների ու դժուարութիւնների դիմագրաւման մէջ: Այսօր Պօղոս առաքեալի խօսքով ենք գնահատում արցախաբնակ մեր սիրելի քոյրերի ու եղբայրների աննկուն կամքը, յանուն հայրենիքի պաշտպանութեան ու անասանութեան անձնագոհութիւններ յանձնառնելու պատրաստակամութիւնը եւ յաղթանակի վճռականութիւնը: «Մենք ձեզնով պարծենում ենք, ձեր համբերութեան ու հաւատի համար՝ ձեր այն բոլոր հալածանքների ու նեղութիւնների մէջ, որոնց դուք համբերում էք» (Բ Թեսաղ. Ա 4): Միւրեքներ, Մենք հպարտ ենք մեր ժողովրդով իրենց զաւակներին հայրենիքին ընծայող մեր հայրերով ու մայրերով, դէպի առաջնագիծ շտապող հայրենասէր երիտասարդներով ու ազատամարտիկներով, յանուն մեր կեանքի անվտանգութեան ու յարատեւութեան տքնողներով, Արցախին սատարող ամէն մեծ ու փոքրով: Հպարտ ենք գինուոր ու

սպայ մեր զաւակներով, որ անառիկ են պահում մեր հայրենիքի սահմանները եւ մարտնչում են յաղթանակի անվերապահ հաւատով: Մենք հպարտ ենք մեր ժողովրդի համարմբ բուռնութեամբ եւ միասնականութեամբ զբաւեւրուողներով, արցախահայութեանը օգնական լինելու աշխարհասփիւռ հայութեան պատրաստակամութեամբ եւ յանձնառութիւններով, որով պիտի դիմագրաւենք թշնամուն եւ թոյլ չտանք իրագործել նոր ցեղապանութիւն: Հայրապետական Մեր պատգամն ենք վերստին բերում ձեզ, սիրելի զաւակներ մեր ի հայրենիս եւ ի սփիւռս, զօրեղ մնալու հայրենասիրութեամբ ու ազգասիրութեամբ, ոգով աննկուն ու անվեհեր? միասնական ջանքերով ու գործերով ընթանալու դէպի յաղթանակ: Միասնաբար պիտի պաշտպանենք մեր հայրենիքը, հզօրացնենք մեր անկախ պետականութիւնը եւ անվտանգութեամբ խաղաղ երկիր աւանդենք մեր սերունդներին: Աստծոյ պահպանութիւնն ու հովանին մեր ժողովրդին եւ հայրենիքին: Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինութեամբ զօրակցութեան աղօթք կատարուեց նաեւ Հայաստանի եւ սփիւռքի թեմերի բոլոր վանքերում եւ եկեղեցիներում:

NATIONAL NOTARY ASSOCIATION  
NOTARY PUBLIC

Garine Depoyan

626-755-4773

554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106

ghdepyan@gmail.com

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**

ՓԱՍՍԻՏԻԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸՄԱՐ)

**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻՅՆԵՐՈՒ ԸՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**(626) 797-7680**

# Քալիֆորնիոյ Ուսուցիչները Կ'ըսեն Քուէարկեցէք ✓ PROP 15-ի Օգտին

Թիւ 15 Օրէնքի Առաջադրանքը տանտէրները կը պաշտպանէ, նոյն ատեն փակելով առեւտրական սեփականութեան հարկի սողանցքները, որպէսզի մեծ ընկերութիւններուն վճարել տայ իրենց հաւասար բաժինը: Որպէսզի կարենանք ներդրում կատարել մեր տեղւոյն դպրոցներուն, համայնքներուն եւ մեր աշակերտներուն ապագային մէջ:

«Սի.Թի.Էյ.»ի Նախագահ Ի. Թոպի Պոյտ

Ինացէք աւելին՝  
**yes15.org**  
կայքին վրայ



Ծանուցումը վճարուած է Educators for Equity-ի կողմէ, Yes on 15 and 16,  
Sponsored by California Teachers Association.  
Յանձնախումբի գլխաւոր ֆինանսատրուար՝  
California Teachers Association  
-ի կողմէ:  
Ֆինանսատրումին մանրամասնութիւնները՝ [www.fppc.ca.gov](http://www.fppc.ca.gov) կայքին վրայ:

